«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ
2022թ. երկրորդ եռամսյակի համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն……3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն…….....4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն…….5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն…….6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ……...…7

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական վիճակի մասին

30 հունիսի 2022 թ.

ՎՏԲ - Հայաստան Բանկ ՓԲԸ (ք. Երևան, Մոսկովյան 35, 68-73)

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Անվանումը	*Տան.*	*30/06/2022*	*31/12/2021*
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	31,659,260	76,915,359
Առևտրային արժեթղթեր	6	-	240,067
Հետգնման պայմանագրերով գրավադրված առևտրային արժեթղթեր	6	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	7	14,431,642	22,472,177
Հաճախորդներին տրված վարկեր	8	163,608,314	211,624,164
Ներդրումային արժեթղթեր	9	24,746,821	21,360,114
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	9	-	-
Հիմնական միջոցներ	10	11,389,289	11,600,199
Ոչ նյութական ակտիվներ	11	2,736,913	2,754,855
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով		260,311	263,922
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Այլ ակտիվներ	13	10,353,123	14,407,466
Ընդամենը ակտիվներ		**259,185,673**	**361,638,323**
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	14	198,016	4,665,095
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	15	4,927,493	2,045,400
Հաճախորդների հաշիվներ	16	189,982,086	288,445,026
Այլ փոխառու միջոցներ	17	8,589,483	8,316,655
Պահուստներ		143,011	115,365
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		3,185,427	3,724,576
Հետաձգված հարկային պարտավորություններ		2,034,321	1,982,715
Այլ պարտավորություններ	13	923,037	2,034,107
Ընդամենը պարտավորություններ		**209,982,874**	**311,328,939**
Կապիտալ	18		
Կանոնադրական կապիտալ		63,775,674	63,775,674
Էմիսիոն եկամուտ		130,557	130,557
Կուտակված վնաս		(16,509,857)	(16,121,266)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		1,321,016	1,293,119
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		485,409	1,231,300
Ընդամենը կապիտալ		**49,202,799**	**50,309,384**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**259,185,673**	**361,638,323**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/07/2022

ԿՏ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահի ժ/պ Ա.Ռ.Ավագյան

Գլխավոր հաշվապահ Վ.Վ.Դուրգարյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

30 հունիսի 2022 թ.

ՎՏԲ - Հայաստան Բանկ ՓԲԸ (ք. Երևան, Մոսկովյան 35, 68-73)

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Անվանումը	*Տող.*	*01/04/2022-30/06/2022*	*01/01/2022-30/06/2022*	*01/04/2021-30/06/2021*	*01/01/2021-30/06/2021*
Տոկոսային եկամուտ	20	7,755,714	17,035,438	9,235,101	18,094,588
Տոկոսային ծախս	20	(3,478,090)	(6,720,777)	(3,544,304)	(6,810,073)
Զուտ տոկոսային եկամուտ	20	**4,277,624**	**10,314,661**	**5,690,796**	**11,284,515**
Վարկային կորուստների գծով ծախսեր	12	(1,558,690)	(4,026,823)	(3,187,581)	(6,132,405)
Վարկային կորուստների գծով ծախսերից հետո զուտ տոկոսային եկամուտ		**2,718,934**	**6,287,838**	**2,503,215**	**5,152,110**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	21	504,134	888,087	412,931	781,264
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ		405	(47)	(56,698)	(61,587)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ/(վնաս)		37,761	51,455	65,257	218,218
Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ(վնաս)	22	3,160,270	3,979,790	330,739	519,369
Այլ եկամուտ	23	111,921	165,403	388,407	568,266
Ոչ տոկոսային եկամուտ		**3,814,491**	**5,084,688**	**1,140,635**	**2,025,530**
Անձնակազմի գծով ծախսեր	24	(1,894,040)	(3,955,836)	(1,831,605)	(3,579,961)
Մաշվածություն և ամորտիզացիա	10, 11, 24	(480,467)	(968,909)	(535,993)	(1,059,386)
Այլ գործառնական ծախսեր	24	(3,304,576)	(6,461,906)	(1,240,758)	(2,209,649)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ եկամուտներ(ծախսեր)	12	(432,798)	(187,051)	(60,954)	(267,198)
Ոչ տոկոսային ծախսեր		**(6,111,880)**	**(11,573,702)**	**(3,669,310)**	**(7,116,195)**
Շահույթ/վնաս մինչև շահութահարկ		**421,545**	**(201,176)**	**(25,459)**	**61,445**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում		(150,393)	(159,518)	568	(3,436)
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/(վնաս)		**271,153**	**(360,694)**	**(24,891)**	**58,010**
Այլ համապարփակ եկամուտ/վնաս					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներից զուտ օգուտ/(վնաս)		(410,540)	(745,891)	(94,175)	(231,964)
Շենքերի վերագնահատում		-	-	-	-
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ շահույթ/վնաս		**(139,387)**	**(1,106,585)**	**(119,066)**	**(173,954)**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/07/2022

ԿՏ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահի ժ/պ Ա.Ռ.Ավագյան

Գլխավոր հաշվապահ Վ.Ա.Ղազարյան

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ВТБ БАНК (АРМЕНИЯ)» ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"VTB BANK (ARMENIA)" CLOSED JOINT-STOCK COMPANY
00400222

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

30 հունիսի 2022 թ.

ՎՏԲ - Հայաստան Բանկ ՓԲԸ (ք. Երևան, Մոսկովյան 35, 68-73)

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	Ծան.	01/01/2022-30/06/2022	01/01/2021-30/06/2021
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		18,281,361	17,613,895
Վճարված տոկոսներ		(6,508,926)	(6,417,826)
Ստացված միջնորդավճարներ		1,296,749	1,658,382
Վճարված միջնորդավճարներ		(408,662)	(877,117)
Զուտ իրացված օգուտ արտարժույթով գործառնություններից		3,863,992	535,714
Ստացված այլ եկամուտ		151,165	568,266
Աշխատակազմին վճարված գումարներ		(3,995,409)	(3,843,559)
Վճարված այլ գործառնական ծախսեր		(6,461,906)	(2,209,649)
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**6,218,364**	**7,028,105**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում			
Առևտրային արժեթղթեր		240,067	25,742
Պահանջներ բանկերի նկատմամբ		5,109,384	(9,286,799)
Հաճախորդներին տրված վարկեր		34,806,865	(15,302,729)
Այլ ակտիվներ		3,729,146	5,010,719
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		(4,463,447)	21,177,033
Պարտավորություններ բանկերի նկատմամբ		7,751,004	(4,921,693)
Հաճախորդների հաշիվներ		(92,164,454)	(869,154)
Այլ պարտավորություններ		(2,117,807)	(394,778)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը		**(40,890,878)**	**2,466,446**
Վճարված շահութահարկ		-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից		**(40,890,878)**	**2,466,446**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(10,396,550)	(770,593)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից հոսքեր		6,315,360	(3,336,734)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(723,123)	(2,218,325)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից հոսքեր		(16,933)	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ներդրումային գործունեությունից		**(4,821,246)**	**(6,325,652)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Այլ փոխառու միջոցների ներգրավումից հոսքեր		3,555,689	779,087
Այլ փոխառու միջոցների մարումներ		(3,288,091)	(724,057)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		**267,598**	**55,030**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		194,434	(1,281,130)
Սպասվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(6,007)	(15,869)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(45,256,099)**	**(5,101,174)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		76,915,359	68,380,907
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	5	**31,659,260**	**63,279,733**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/07/2022

ԿՏ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահի ժ/պ Ա.Ռ.Ավագյան

Գլխավոր հաշվապահ Վ.Վ.Դուրգարյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
30 հունիսի 2022 թ.

ՎՏԲ - Հայաստան Բանկ ՓԲԸ (ք. Երևան, Մոսկովյան 35, 68-73)
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	*Կանոնադրական կապիտալ*	*Էմիսիոն եկամուտ*	*Հիմնական միջոցների վերագնահատում՝ հարկերից զտված*	*Ներդրումային արժեթղթերի վերագնահատում՝ հարկերից զտված*	*Կուտակված վնաս*	*Ընդամենը*
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**63,775,674**	**130,557**	**978,146**	**2,264,044**	**(17,515,421)**	**49,633,000**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	**-**	**-**	**299,859**	**(1,032,744)**	**1,409,269**	**676,384**
Շենքերի մաշվածության և վերադասակարգման հետ կապված վերագնահատման պահուստի տեղափոխում	-	-	15,114	-	(15,114)	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**63,775,674**	**130,557**	**1,293,119**	**1,231,300**	**(16,121,266)**	**50,309,384**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**63,775,674**	**130,557**	**1,293,119**	**1,231,300**	**(16,121,266)**	**50,309,384**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	**-**	**-**	**-**	**(745,891)**	**(360,694)**	**(1,106,585)**
Շենքերի մաշվածության և վերադասակարգման հետ կապված վերագնահատման պահուստի տեղափոխում	-	-	27,897	-	(27,897)	-
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**63,775,674**	**130,557**	**1,321,016**	**485,409**	**(16,509,857)**	**49,202,799**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/07/2022

ԿՏ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահի ժ/պ Ա.Ռ.Ավագյան

Գլխավոր հաշվապահ Վ.Վ.Դուրգարյան

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«VTB BANK (ARMENIA)» CLOSED JOINT-STOCK COMPANY
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
00400222

(հազար ՀՀ դրամ)

1. Գործունեության նկարագրություն

Բանկի ներկայիս ամբողջական անվանումն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից 2006թ. հունիսի 20-ին տրված № 64 լիցենզիայի հիման վրա (պետական գրանցում՝ 1994թ. մայիսի 25):

2007թ. հուլիսի 25-ից Ռուսաստանի Դաշնության «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ն հանդիսանում է Բանկի միակ բաժնետեր (բաժնետոմսերի 100%-ի սեփականատեր):

Բանկը հանդիսանում է Հայաստանի Բանկերի միության անդամ, ArCa, Multicarta և Mir քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան փող., շենք 35 հասցեում: Բանկն ունի մասնաճյուղերի լայն ցանց ՀՀ տարածքում: Բանկն ունի գործող 73 մասնաճյուղ (28-ը՝ Երևան քաղաքում, 45-ը՝ ՀՀ այլ մարզերում), որտեղ սպասարկվում են ավելի քան 561 հազար հաճախորդ: Բանկն ունի 210 բանկոմատ: Բանկի աշխատողների թվաքանակը 2022թ. երկրորդ եռամսյակի դրությամբ 1115 է:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր մաս

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառումը և բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության և նորմատիվային ակտերի՝ Բանկը պարտավոր է հաշվապահական հաշվառումը իրականացնել և ֆինանսական հաշվետվությունները պատրաստել ՀՀ դրամով: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվապահական տվյալների վրա, որոնք ձևավորվել են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառմանը վերաբերող օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի հիման վրա՝ հաշվի առնելով հոդվածների ճշգրտումները և վերադասակարգումները, որոնք անհրաժեշտ են դրանք ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են փաստացի արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ, առևտրային և ներդրումային արժեթղթերը գնահատված են իրական արժեքով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը՝ COVID-19-ի հետ կապված վարձավճարների զիջումները, որը վարձակալողներին բացառություն է տալիս գնահատելուց, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարի

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

զիջումը վարձակալության փոփոխություն է, թե՝ ոչ:

Բանկը չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել:

Բանկը նաև կիրառել է ստանդարտների որոշ փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ից, բայց Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել:

Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար ձեռքբերող կողմը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը, որը բաժնետերերին ներկա պահին էլ տալիս է ընկերության զուտ ակտիվներում համապատասխան բաժնի իրավունք ընկերության լուծարման դեպքում, կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Չվերահսկվող բաժնեմասի այլ բաղադրիչները գնահատվում են ձեռքբերման պահին իրական արժեքով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են:

Եթե Բանկը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Սա ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատման անհրաժեշտության վերլուծությունը:
Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերողը ձեռքբերվող կազմակերպությունում իր նախկինում ունեցած բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռքբերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում՝ մինչև կապիտալում ամբողջական մարումը:

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկվող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ձեռնարկատիրական գործունեության միավորում (շարունակություն)

դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռքբերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե՝ ոչ: Եթե գուդվիլը կազմում է դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մաս, և այդ ստորաբաժանման մի մասն օտարվում է, օտարվող մասին վերագրելի գուդվիլը ընդգրկվում է այդ գործունեության հաշվեկշռային արժեքի մեջ օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս: Այս պարագայում օտարվող գուդվիլը գնահատվում է օտարվող գործունեության արժեքի և դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մնացած մասի արժեքի հարաբերության հիման վրա:

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերումը

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերման հաշվառումն իրականացվում է բաժնեմասերի միավորման մեթոդով:

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կողմերի միջև փոխանցված դուստր կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում հաշվեկշռային արժեքով, որով արտացոլված են դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվության մեջ՝ փոխանցման ամսաթվի դրությամբ: Նախորդ սեփականատիրոջ կողմից կազմակերպության գնման ժամանակ առաջացած գուդվիլը նույնպես արտացոլվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման տարբերությունը ընդգրկվում է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ որպես սեփական կապիտալի ճշգրտում:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ համեմատական տվյալները, կազմվում են այնպես, եթե դուստր կազմակերպությունը ձեռք բերված լիներ Խմբի կողմից նախորդ սեփականատիրոջ կողմից սկզբնական ձեռքբերման ամսաթվով:

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված են համարվում այն կազմակերպությունները, որոնցում Խումբը ունի 20%-ից 50% քվեարկող բաժնեմաս կամ Բանկն ունի էական ազդեցության այլ հնարավորություններ, որը, սակայն, չի նշանակում լիովին վերահսկում: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը: Հաշվեկշռային արժեքի հետագա փոփոխությունները արտացոլում են միավորմանը հաջորդող Բանկի՝ ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվների բաժնեմասի փոփոխությունները: Բանկի՝ ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստներում փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Այնուամենայնիվ, երբ Բանկի՝ ասոցիացված կազմակերպություններում վնասների բաժինը գերազանցում է իր բաժնեմասը ասոցիացված կազմակերպությունում, Բանկը չի ճանաչում հետագա կորուստները, եթե Բանկը չի պարտավորվում հետագա վճարումներ կատարել ասոցիացված կազմակերպությանը կամ ասոցիացված կազմակերպության անունից:

Բանկի և իր ասոցիացված կազմակերպության միջև գործարքներից չիրացված օգուտները բացառվում են մինչև Բանկի՝ ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը. չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքի չափում

Բանկը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և այնպիսի ոչ ֆինանսական ակտիվները, ինչպիսիք են ներդրումային գույքը, չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Բանկը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկային: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Բանկն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Բանկը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն՝այն ամսաթվով, երբ Բանկը պարտավորվում է գնել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Բանկն իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվի կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բանկն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բանկը կարող է հաշվառել ֆինանսական գործիքներն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Պահանջներ բանկերի նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Բանկը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

Բիզնես մոդելի գնահատում

Բանկն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Բանկի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Բանկի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Բանկի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Բանկը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք նրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրի մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Բանկը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Բանկը չափում է պարտքային գործիքները իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո տեղափոխվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Բանկը երբեմն ընտրում է՝ իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Բանկը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և չօգտագործված վարկային պարտավորություններ

Բանկը թողարկում է ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Բանկի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարների առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Բանկը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Բանկը երբեմն թողարկում է վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ շուկայականից ցածր տոկոսադրույքով: Այդ պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ հետագայում չափվում են ակնկալվող վարկային կորուստների պահուստի և սկզբնական ճանաչված արժեքի առավելագույնի չափով, անհրաժեշտության դեպքում հանելով ճանաչված կուտակված եկամտի գումարը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Կատարողական երաշխիքի պայմանագրեր

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Կատարողական երաշխիքի պայմանագրերը վարկային ռիսկ չեն փոխանցում: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Հետևաբար, կատարողական երաշխիքի պայմանագրերը չեն համարվում ֆինանսական գործիքներ և այդպիսով՝ չեն ընդգրկվում ՖՀՄՍ 9-ի շրջանակներում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

Բանկն սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: 2021թ.-ի ընթացքում Բանկը չի վերադասակարգել իր ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները (բացառությամբ պարտադիր պահուստների), ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող և պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված միջոցները:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները արտացոլվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղների հետ գործառնությունների ժամանակ ՀՀ ԿԲ գների փոփոխությունները հաշվառվում են որպես թանկարժեք մետաղների գործառնություններից գնային տարբերություններ այլ եկամուտների կազմում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային

հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոփերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործառնություններից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես առևտրական նպատակով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից զուտ շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Պարունակվող ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ մայր-պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Պարունակվող ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկանշից կամ վարկային ինդեքսից, այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար:

Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ փոխանցվող ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում պարունակվող ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է:

Պարտավորություններում կամ ոչ ֆինանսական մայր պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն մայր պայմանագրի հետ, և մայր պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող: Պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են առևտրային պորտֆելում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI- ի գնահատումների հիման վրա:

Մուրհակներ

Գնված մուրհակները ներառվում են առևտրական նպատակով պահվող արժեթղթերում, պահանջներ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր հոդվածներում՝ կախված ձեռք բերման նպատակից և պայմաններից, և հաշվառվում են հաշվետվությունում ակտիվների համապատասխան դասերի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների հիման վրա:

Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Բանկն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, թողարկված պարտատոմսերը, այլ փոխառու միջոցները և ստորադաս փոխառու միջոցները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Փոխառու միջոցներ (շարունակություն)

Եթե Բանկը գնում է սեփական պարտավորությունները, դրանք հանվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից և պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված փոխհատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական վարձակալություն

i. ***Բանկը՝ որպես վարձակալ***

Բանկը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Բանկը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը խելամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Բանկը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Բանկի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Բանկն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական վարձակալություն (շարունակություն)

վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Բանկը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Բանկը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող): Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ii. Գործառնական վարձակալություն – Բանկը՝ որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Բանկը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

iii. *Ֆինանսական վարձակալություն – Բանկը որպես վարձատու*

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է այնպիսի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների հաշվանցում (շարունակություն)

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Բանկը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Բանկը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- գործընկերոջ փոփոխությունը,
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Բանկը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով, այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Բանկը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ, կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ փոփոխության արդյունքում ակտիվը դասակարգվում է որպես վարկային առումով արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ մակարդակում՝ նվազագույնը վեցամսյա փորձաշրջանով: Վերակազմակերպված վարկը 3-րդ մակարդակից վերադասակարգելու համար պետք է կատարված լինեն մայր գումարի կամ տոկոսների որոշ մասի պարբերական վճարումներ առնվազն փորձաշրջանի տևողության կեսի ընթացքում՝փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, երբ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Բանկը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում (շարունակություն)

Այն դեպքում, երբ Բանկը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Բանկը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Բանկից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Բանկի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Արժեթղթավորում

Գործառնական գործունեության շրջանակում Բանկը արժեթղթավորում է իր ֆինանսական ակտիվները՝ հիմնականում այդ ակտիվները վաճառելով հատուկ նշանակության կազմակերպությունների, որոնք արժեթղթեր են տրամադրում իրենց ներդրողներին: Փոխանցված ակտիվները կարող են ենթակա լինել ապաճանաչման ամբողջությամբ կամ մասնակիորեն: Արժեթղթերով ապահովված ֆինանսական ակտիվներում մասնակցությունը կարող է պահվել Բանկի կողմից, և այն սկզբնապես դասակարգվում է որպես վարկեր և դեբիտորական պարտքեր: Արժեթղթավորման գծով օգուտները կամ վնասները գնահատվում են ապաճանաչված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և պահպանվող մասնակցության հիման վրա՝ հիմք ընդունելով փոխանցման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքների հարաբերակցությունը:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Բանկը դադարեցրել է վերականգնումը՝ կապված գրավի իրացման կամ դրա բռնագանձման ցածր հավանականությամբ: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրսգրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

Հարկում

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում (շարունակություն)

տարբերությունների վրա պարտավորությունների մեթոդով: Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է բոլոր ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող գուդվիլի կամ ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, և որն առաջացման պահին չի ազդում ո՛չ հաշվապահական, ո՛չ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի նկատմամբ կարող են կիրառվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքաչափով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքաչափերի վրա:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր և ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները ենթակա են կառավարման, և հավանական է, որ դրանք տեսանելի ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Բանկի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են այլ գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի:

Փաստացի արժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերն արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի տարեկան փոխանցումը չբաշխված շահույթ իրականացվում

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի մաշվածության գումարների տարբերության հաշվին: Ակտիվի օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ակտիվի մաշվածության հաշվարկումը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար մատչելի է դառնում: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Տարի
Շենքեր և կառուցվածքներ	50
Կահույք և պարագաներ	8
Սերվերային սարքավորումներ, Էմբոսերներ, բանկոմատներ և արժույթի փոխարկման մեքենաներ	10
Համակարգչային և գրասենյակային տեխնիկա	5
Փոխադրամիջոցներ	10

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է որպես փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերություն: Դուստր ընկերությունների ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը ճանաչվում է գուդվիլի և ոչ նյութական ակտիվների կազմում: Ասոցիացված կազմակերպությունների ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը արտացոլվում է ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումների կազմում: Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով, ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Բանկի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե՝ ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը, պետք է.

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Բանկի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր
- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտը՝ համաձայն ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի սահմանման:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Այլ ոչ նյութական ակտիվներ

Այլ ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական
ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը, յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Վաճառքի համար պահվող ակտիվներ

Բանկը դասակարգում է ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Դրա համար ակտիվը (կամ օտարման խումբը) պետք է իր ներկա վիճակում պատրաստ լինի անմիջապես վաճառքի համար՝ միայն այդպիսի ակտիվների (կամ օտարման խմբերի) վաճառքների համար բնորոշ և ընդունված պայմաններով, իսկ դրա վաճառքը պետք է լինի բարձր հավանական:

Որպեսզի վաճառքը ունենա բարձր հավանականություն, Բանկի ղեկավարությունը պետք է հստակորեն նպատակադրված լինի պլանավորել վաճառել ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) և պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր: Ավելին, ակտիվը (կամ օտարման խումբը) իր ընթացիկ իրական արժեքի համեմատ ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում վաճառքի համար, բացի այդ պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կհամարվի ավարտված:

Բանկը վաճառքի համար պահվող ակտիվը (կամ օտարման խումբը) չափում է հաշվեկշռային արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքից նվազագույնով: Բանկը ճանաչում է արժեզրկումից վնասներ՝ ակտիվի (կամ օտարման խմբի) արժեքի սկզբնական կամ հետագա՝ մինչև վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքը դուրսգրումների միջոցով, եթե իրադարձությունները կամ պայմանների փոփոխությունները վկայում են, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է արժեզրկված լինել:

Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների արժեքը որոշվում է առաջին մուտք առաջին ելք սկզբունքի հիման վրա և իր մեջ ներառում է պաշարների ձեռքբերման և ներկա գտնվելու վայր և վիճակին բերելու հետ կապված ծախսումները:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը, որոնք դիսկրեցիոն շահաբաժինների իրավունք

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Կանոնադրական կապիտալ (շարունակություն)

են տալիս, դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում՝ որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Բանկ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը.

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս

Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք
անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Բանկի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Բանկը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչումը (շարունակություն)

Ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Բանկը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտներում» օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից Բանկը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

- *միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից*

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

- *միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով*

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Բանկի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո: Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո:
Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարում ստանալու իրավունքը հաստատվում է:

Արտարժույթի վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի գործառնական ու հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժութային գործառնություններից օգուտներ/(վնասներ)՝ արտարժույթի վերագնահատում» հոդվածում: Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժույթի վերահաշվարկ (շարունակություն)

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2022 թվականի հունիսի 30-ի և 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հայտարարված փոխարժեքը կազմում էր 1 ԱՄՆ դոլարի համար 407.21 և 480.14 ՀՀ դրամ՝ համապատասխանորեն:

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Ստորև ներկայացված են նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Բանկի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մտադիր է կիրառել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, կիրառելիության դեպքում, ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրեր

2017 թվականի մայիսին IASB-ն թողարկեց ՖՀՄՍ 17 *Ապահովագրական Պայմանագրեր* (ՖՀՄՍ 17), որը ապահովագրական պայմանագրերի համապարփակ նոր հաշվապահական ստանդարտ է, որն ընդգրկում է ճանաչումը և չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4-ը *Ապահովագրության Պայմանագրերը* (ՖՀՄՍ 4), որը թողարկվել է 2005 թվականին: ՖՀՄՍ 17-ը կիրառվում է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակների նկատմամբ (այսինքն՝ կյանքի, ոչ կյանքի, ուղղակի ապահովագրության և վերաապահովագրության), անկախ դրանք թողարկող կազմակերպությունների, ինչպես նաև որոշակի երաշխիքների և ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք ունեն հայեցողական մասնակցության հատկանիշներ: Կկիրառվեն մի քանի շրջանակի բացառություններ: ՖՀՄՍ 17-ը ներկայացնում է նոր հաշվապահական պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային ապրանքների համար, որոնք կարող են ազդել այն գործիքների կամ դրանց բաղադրիչների որոշման վրա, որոնց նկատմամբ կկիրառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի դրույթները:

Վարկային քարտեր և նմանատիպ ապրանքները, որոնք ապահովում են ապահովագրական ծածկույթ. Այսպիսի ապրանքները արտադրանք թողարկողների մեծ մասը կկարողանա շարունակել կիրառել հաշվապահական հաշվառման գոյություն ունեցող մոտեցումները և դրանք հաշվառել ֆինանսական գործիքներ ՖՀՄՍ 9-ի համաձայն: ՖՀՄՍ 17-ն իր շրջանակից բացառում է կրեդիտ քարտի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրեր, որոնք ապահովում են վարկային կամ վճարման պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրական պայմանագրի սահմանմանը, այն և միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը չի արտացոլում անհատի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես վարկային քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է.

- Առանձնացնել ապահովագրական ծածկույթի բաղադրիչը և դրա նկատմամբ կիրառել ՖՀՄՍ 17,
- Կիրառել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 Եկամուտ հաճախորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ) մյուս բաղադրիչների նկատմամբ:

Վարկային պայմանագրեր, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական դեպքերի համար փոխհատուցումը սահմանափակվում է այն գումարով, որն այլ կերպ պահանջվում է պայմանագրով ստեղծված ապահովագրատիրոջ պարտավորությունը մարելու համար. Նման վարկեր թողարկողները, օրինակ. վարկ՝ մահից հրաժարվելու դեպքում – ունեն ՖՀՄՍ 9 կամ ՖՀՄՍ 17 կիրառելու ընտրության տարբերակ: Ընտրությունը կկատարվի պորտֆելի մակարդակով և կլինի անշրջելի:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, համեմատական ցուցանիշները պահանջվում են: Վաղ կիրառումը թույլատրվում է, եթե ՖՀՄՍ 17-ի կիրառման ժամանակ կազմակերպությունը կիրառում է նաև ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Բանկն այժմ չափում է ՖՀՄՍ 17-ի կիրառման կիրառման ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

2020 թվականի հունվարին ՀՀՄՍԲ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-76-րդ պարագրաֆներում՝ պարզաբանելու պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները հստակեցնում են հետևյալը.

- ինչ է նշանակում պարտավորությունների մարումը հետաձգելու իրավունք,
- պարտավորությունների մարումը հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- պարտավորությունների դասակարգման վրա չի ազդում այն հավանականությունը, որ կազմակերպությունը կկիրառի պարտավորության մարումը հետաձգելու իր իրավունքը,
- պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա միայն այն դեպքում, եթե փոխարկելի պարտավորության մեջ ներառված ածանցյալ գործիքն ինքնին բաժնային գործիք է:

Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կիրառվում են հետընթաց: Բանկը ներկայումս ուսումնասիրում է այս փոփոխությունների հնարավոր ազդեցությունը պարտավորությունների ընթացիկ դասակարգման վրա և գործող վարկային պայմանագրերի պայմանների վերանայման անհրաժեշտությունը:

Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. հղումներ հայեցակարգային շրջանակում

2020 թվականի մայիսին IASB-ն փոփոխություններ է հրապարակել ՖՀՄՍ 3-ի *«Բիզնեսի համակցություններ – Հայեցակարգային շրջանակների հղումներ»*: Այս փոփոխությունների նպատակն է փոխարինել 1989 թվականին թողարկված Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման ծրագրի հղումները
2018 թվականի մարտին թողարկված Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ծրագրին հղումներով՝ առանց էական փոփոխություններ կատարելու ստանդարտը պահանջներում:

Խորհուրդը նաև բացառություն է ավելացրել ՖՀՄՍ 3-ի ճանաչման սկզբունքից՝ խուսափելու 2-րդ օրվա հնարավոր օգուտներից կամ կորուստներից այն պարտավորությունների և պայմանական պարտավորությունների համար, որոնք կմտնեն ՀՀՄՍ 37-ի կամ ՖՀՄԿԿ 21 *«Պարտադիր վճարումներ»* պարզաբանումներում, եթե դրանք առաջանային որպես անհատական գործարք:

Միևնույն ժամանակ, Խորհուրդը որոշեց պարզաբանել ՖՀՄՍ 3-ի առկա պահանջները պայմանական ակտիվների վերաբերյալ, որոնց վրա չի ազդի Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման ծրագրի հղումների փոխարինումը:

Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կիրառվում են հեռանկարում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում. Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը

2020 թվականի մայիսին IASB-ն թողարկել է *«Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան օգտագործումը»*, որն արգելում է կազմակերպություններին հիմնական միջոցների միավորի արժեքից հանել իրերի վաճառքից ստացված ցանկացած հասույթ, որը ստացվել է այդ միավորը գտնվելու վայրը և այն վիճակի բերելու, որն անհրաժեշտ է դրա շահագործման համար՝ ղեկավարության մտադրություններին համապատասխան: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է այդ հոդվածների վաճառքից ստացված հասույթը, ինչպես նաև այդ հոդվածների արտադրության արժեքը՝ շահույթում կամ վնասում:

Այս փոփոխություններն ուժի մեջ են 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է հետընթաց կիրառվեն հիմնական միջոցների այն հոդվածների

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

նկատմամբ, որոնք օգտագործման համար հասանելի են դարձել հետևյալներից առավել վաղ ժամանակաշրջանում. տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված սկզբի կամ դրանից հետո երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունները:

Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում – Ծանր պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԲ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 37-ում, որոնք պարզաբանում են, թե ինչ ծախսեր պետք է հաշվի առնի կազմակերպությունը՝ գնահատելիս, թե արդյոք պայմանագիրը ծանր է կամ անշահավետ:

Փոփոխությունները նախատեսում են մոտեցում՝ հիմնված «պայմանագրին ուղղակիորեն վերագրվող ծախսերի» վրա: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառում են ինչպես այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, այնպես էլ բաշխված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են պայմանագրի կատարմանը: Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն վերագրելի չեն պայմանագրին և, հետևաբար, բացառվում են, եթե դրանք ուղղակիորեն ենթակա չեն փոխհատուցման պայմանագրի կողմի կողմից:

Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Բանկը կկիրառի այս փոփոխությունները այն պայմանագրերի նկատմամբ, որոնց համար դեռևս չի կատարել իր բոլոր պարտավորությունները տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ առաջին անգամ կիրառում է փոփոխությունները:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» – «Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման 10% փորձնական վճար»

Որպես ՖՀՄՍ ստանդարտների 2018-2020 տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություն է կատարել ՖՀՄՍ 9-ում: Փոփոխությունը հստակեցնում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է, երբ գնահատում է, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները էապես տարբերվում են սկզբնական ֆինանսական պարտավորությունների պայմաններից: Այս վճարները ներառում են միայն վարկառուի և վարկատուի միջև վճարված կամ ստացված գումարները, ներառյալ՝ վարկառուի կամ վարկատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Ընկերությունը փոփոխությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխվել կամ փոխանակվել են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբից կամ դրանից հետո, երբ Ընկերությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունը:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, ընդ որում՝ վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Բանկը կկիրառի փոփոխությունները համախմբված ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխվել կամ փոխանակվել են տարեկան ժամանակաշրջանի սկզբից կամ դրանից հետո, երբ առաջինը կկիրառի փոփոխությունը:

Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 8-ում – Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԲ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում՝ ներմուծելով *«հաշվապահական գնահատումներ»* սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղումների միջև եղած տարբերությունը: Այն նաև բացատրում է, թե ինչպես են կազմակերպությունները

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

օգտագործում չափման մեթոդները և մուտքային տվյալները հաշվապահական հաշվառման գնահատումների մշակման համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղ կիրառումը թույլատրվում է պայմանով, որ այդ փաստը բացահայտվի:

Ակնկալում է, որ դա էական ազդեցություն չի ունենա իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 1-ում և 2-րդ գործնական ուղեցույցի ՖՀՄՍ կիրառման վերաբերյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության բացահայտում

2021 թվականի փետրվարին IASB-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ում և Էականության վերաբերյալ դատողություններ կատարելու վերաբերյալ գործնական ուղեցույց 2-ում, որոնք ուղեցույց և օրինակներ են տրամադրում կազմակերպություններին օգնելու էականության վերաբերյալ դատողություններ կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունները պետք է օգնեն կազմակերպություններին բացահայտել հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ առավել օգտակար տեղեկատվություն՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ «էական դիրքերի» բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ «նշանակալի տեղեկատվության» բացահայտման պահանջով, և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես

պետք է ձեռնարկությունները կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները կիրառվում են 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Հնարավոր է վաղաժամկետ կիրառում: Քանի որ ՖՀՄՍ-ների կիրառման վերաբերյալ պրակտիկայի 2-րդ ծանոթագրության փոփոխությունները ոչ պարտադիր ուղեցույց են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության մեջ էականության սահմանման կիրառման վերաբերյալ, փոփոխությունների պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվ սահմանված չէ:

Բանկը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը կարող է ունենալ այս փոփոխությունները Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

4. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Գնահատումների անորոշություն

Բանկի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարների վերաբերյալ կատարվել են հետևյալ առավել կարևոր գնահատումները և դատողությունները.

Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Եթե ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 27-ում:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական գնահատումներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բանկի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Ներքին վարկային վարկանիշի համակարգը, որն օգտագործվում է Բանկի կողմից՝ դեֆոլտի հավանականությունը որոշելու համար (PD),
- Բանկի գնահատման չափանիշները, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ, ինչի արդյունքում ֆինանսական ակտիվների պահուստները պետք է չափվեն ելնելով գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների մեծության և որակական գնահատման հիման վրա,
- Ֆինանսական ակտիվների խմբավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և ներդրված միջոցների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

Վարձակալություններ. լրացուցիչ փոխառության ներգրավման տոկոսադրույքի գնահատում

Բանկը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար վարձակալության գծով պարտավորությունը չափելիս կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը վարձակալը ստիպված կլիներ վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման համար: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը արտացոլում է այն գումարը, որը Բանկը «պետք է վճարի», ինչը պահանջում է գնահատումների կիրառում, երբ չկան դիտարկելի տոկոսադրույքներ, կամ երբ անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ՝ վարձակալության ժամկետները և պայմանները արտացոլելու համար (օրինակ, եթե դուստր ընկերության կողմից կնքված վարձակալության պայմանագրի արժույթը տարբերվում է իր ֆունկցիոնալ արժույթից):

Բանկը գնահատում է լրացուցիչ փոխառության ներգրավման տոկոսադրույքը՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալներ (ինչպիսիք են օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), եթե այդպիսիք հասանելի են, և օգտագործում է բանկին հատուկ որոշակի հաշվարկային գնահատականներ:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդներ	13,891,801	38,635,413
Կանխիկ միջոցներ	11,871,200	18,019,595
Այլ բանկերում թղթակցային հաշիվների մնացորդներ	1,405,174	14,809,592
Ժամկետային ավանդներ այլ բանկերում, մինչև 90 օր մարման ժամկետով	4,497,092	5,459,188
Հանած՝ արժեզրկման պահուստ	(6,007)	(8,429)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**31,659,260**	**76,915,359**

(հազար ՀՀ դրամ)

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

Դրամական միջոցների բոլոր մնացորդները վերագրված են առաջին փուլին: Տարվա ընթացում ԱՎԿ պահուստի փոփոխության վերլուծությունը հետևյալն է.

ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**8,429**
ԱՎԿ փոփոխություն	(2,422)
ԱՎԿ պահուստ 2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**6,007**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ 5,902,266 հազ. ՀՀ դրամ դրամական միջոցներ տեղաբաշխվել են միջազգային հաշվարկների գծով Բանկի հիմնական գործընկեր 11 բանկերի թղթակցային հաշիվներում և միջբանկային ավանդներում (2021թ.՝ 20,268,780 հազ. ՀՀ դրամ 9 բանկերում):

6. Առևտրային արժեթղթեր

Բանկին պատկանող առևտրային արժեթղթերը ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
ՀՀ կառավարության պարտատոմսեր	-	240,067
Առևտրային արժեթղթեր	-	**240,067**
ՀՀ կառավարության պարտատոմսեր	-	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված առևտրային արժեթղթեր	**-**	**-**

7. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
Պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում	13,581,440	21,186,791
Այլ միջոցներ սահմանափակ օգտագործման իրավունքով	850,246	1,289,234
Հանած՝ արժեզրկման պահուստ	(44)	(3,848)
Պահանջներ բանկերի նկատմամբ	**14,431,642**	**22,472,177**

Բանկերը պարտավոր են ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխել ոչ տոկոսային դրամային ավանդներ (պարտադիր պահուստներ), որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 4%-ի և արտարժութային միջոցների 18%-ի չափով, որի պահուստավորումը իրականացվում է 8% ՀՀ դրամով և 10% արտարժույթով:

Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ օրենսդրությամբ, սակայն պահուստավորման նվազագույն գումարը չպահպանելը հանգեցնում է տույժերի կիրառման:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ 850,246 հազ. ՀՀ դրամ ընդհանուր արժեքով օգտագործման սահմանափակ իրավունքով միջոցները (2021թ.՝ 1,289,234 հազ. ՀՀ դրամ) տեղաբաշխվել են գործընկեր բանկերում որպես հաշվարկային գործառնությունների ապահովման միջոց:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ բանկերի նկատմամբ պահանջների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

(հազար ՀՀ դրամ)

7. Պահանջներ բանկերի նկատմամբ (շարունակություն)

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**22,476,025**	**22,476,025**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	356,391	**356,391**
Մարված ակտիվներ	(8,150,326)	**(8,150,326)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(250,404)	**(250,404)**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**14,431,686**	**14,431,686**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,848**	**3,848**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	-	**-**
Մարված ակտիվներ	(2,463)	**(2,463)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(1,341)	**(1,341)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	-	**-**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**44**	**44**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում բանկերի նկատմամբ պահանջների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**17,084,859**	**17,084,859**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	5,589,425	**5,589,425**
Մարված ակտիվներ	(7,666)	**(7,666)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(190,593)	**(190,593)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,476,025**	**22,476,025**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,494**	**4,494**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	917	**917**
Մարված ակտիվներ	(74)	**(74)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(1,163)	**(1,163)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(326)	**(326)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,848**	**3,848**

8. Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
Կորպորատիվ վարկավորում	12,721,234	13,451,950
Փոքր բիզնեսի վարկավորում	7,093,645	7,450,394
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,026,801	8,200,044
Սպառողական վարկավորում	102,818,493	160,429,515
Հիփոթեքային վարկավորում	32,805,067	31,428,908
Այլ	9,274,965	2,298,684
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող համախառն վարկեր	**171,740,205**	**223,259,495**
Հանած՝ արժեզրկման պահուստ	(10,100,240)	(13,704,044)
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող զուտ վարկեր	**161,639,965**	**209,555,451**
Առևտրային վարկավորում		
Հաճախորդներին տրվող վարկեր՝ չափված իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով	**1,968,349**	**2,068,713**
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**163,608,314**	**211,624,164**

(հազար ՀՀ դրամ)

8. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չչափվող հախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը, որոնք չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, հիմնականում ներկայացնում են տնտեսական պայմաններից կամ պայմանագրերից ելնելով հետընթացի իրավունք չունեցող վարկեր, ինչպես նաև ածանցյալ գործիքներ ներառող վարկեր, որոնք չեն համապատասխանում բազային վարկային պայմանագրի պայմաններին: Հաճախորդներին տրված վարկերի իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը, որը չափվում է իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, ներկայացված է Ծանոթագրություն 27-ում:

Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների 2022թ. երկրորդ եռամսյակի ընթացքում.

	Վարկեր իրավաբանական անձանց Հազ. դրամ	*Վարկեր անհատներին Հազ. դրամ*	*Ընդամենը Հազ. դրամ*
Մնացորդը տարեսկզբին	2,526,569	11,177,475	**13,704,044**
Զուտ ծախս	(748,473)	4,717,392	**3,968,919**
Զուտ դուրսգրում	3,510,282	(4,729,273)	**(1,218,991)**
Արտարժույթի փոխանակման ազդեցություն	(2,189,822)	(4,163,910)	**(6,353,732)**
Մնացորդը առ 30 հունիսի 2022	**3,098,556**	**7,001,684**	**10,100,240**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերի (առանց հակադարձ հետգնման պայմանագրերի) համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Իրավաբանական անձանց տրված վարկեր	**Փուլ 1**		**Փուլ 2**		**Փուլ 3**	
	Համախառն վարկեր հազ. դրամ	**Արժեզրկման պահուստ հազ. դրամ**	**Համախառն վարկեր հազ. դրամ**	**Արժեզրկման պահուստ հազ. դրամ**	**Համախառն վարկեր հազ. դրամ**	**Արժեզրկման պահուստ հազ. դրամ**
Կորպորատիվ վարկավորում						
Չարժեզրկված	3,250,582	14,778	9,470,652	1,829,422	-	-
Արժեզրկված	-	-	-	-	-	-
Ընդամենը կորպորատիվ վարկավորում	**3,250,582**	**14,778**	**9,470,652**	**1,829,422**	**-**	**-**
Փոքր բիզնեսի վարկավորում						
Չարժեզրկված	5,687,456	109,983	143,732	45,428	-	-
Արժեզրկված	-	-	-	-	1,262,457	1,098,945
Ընդամենը փոքր բիզնեսի վարկավորում	**5,687,456**	**109,983**	**143,732**	**45,428**	**1,262,457**	**1,098,945**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**8,938,038**	**124,761**	**9,614,384**	**1,874,850**	**1,262,457**	**1,098,945**

(հազար ՀՀ դրամ)

8. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ (շարունակություն)

2022թ. հունիսի 30-ի դրությամբ անհատներին տրված վարկերի (առանց հակադարձ հետգնման պայմանագրերի) համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Անհատներին տրված վարկեր	Փուլ 1		Փուլ 2		Փուլ 3	
	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ
Հիփոթեքային վարկեր						
Չարժեզրկված	31,460,825	84,158	701,090	83,503	-	-
Արժեզրկված	-	-	-	-	643,152	92,336
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**31,460,825**	**84,158**	**701,090**	**83,503**	**643,152**	**92,336**
Սպառողական վարկեր						
Չարժեզրկված	89,932,696	1,390,538	8,339,242	2,471,754	-	-
Արժեզրկված	-	-	-	-	4,546,555	2,549,534
Ընդամենը սպառողական վարկեր	**89,932,696**	**1,390,538**	**8,339,242**	**2,471,754**	**4,546,555**	**2,549,534**
Այլ						
Չարժեզրկված	8,963,493	204,824	134,654	37,231	-	-
Արժեզրկված	-	-	-	-	176,818	87,806
Ընդամենը այլ վարկեր	**8,963,493**	**204,824**	**134,654**	**37,231**	**176,818**	**87,806**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**130,357,014**	**1,679,520**	**9,174,986**	**2,592,488**	**5,366,525**	**2,729,676**

Վերանայված և վերակազմակերպված վարկեր

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, եթե պայմանագրի պայմանները վերանայվում են այնպես, որ, ըստ էության, այն դառնում է նոր վարկ, իսկ տարբերությունը ճանաչվում է որպես օգուտ կամ վնաս ապաճանաչումից առաջ՝ մինչև արժեզրկումից կորուստի ճանաչումը: Սկզբնական ճանաչման դեպքում վարկերը դիտարկվում են որպես 1-ին փուլ ԱՎԿ նպատակների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ստացված վարկը համարվում է POCI ակտիվ:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում դրամական միջոցների հոսքերի էական փոփոխության, ապա փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման: Հիմնվելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների հոսքերի փոփոխության վրա, Բանկը ճանաչում է փոփոխված շահույթը կամ վնասը մինչև արժեզրկումից կորուստի ճանաչումը:

Վարկային ռիսկը զսպող գրավ և այլ գործիքներ

Պահանջվող գրավի տեսակն ու չափը կախված է վարկառուի վարկային ռիսկի գնահատականից: Բանկի կողմից սահմանված են ապահովման միջոցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչներ:
Ստորև ներկայացված են ստացված ապահովման միջոցների հիմնական տեսակները.

- Դրամական միջոցներ և արժեթղթեր՝ արժեթղթերի փոխատվության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում,
- Անշարժ գույք, պաշարներ և դեբիտորական պարտքեր՝ կորպորատիվ վարկավորման դեպքում,
- Ձեռք բերվող բնակտարածք, ոսկյա իրեր՝ սպառողական վարկավորման դեպքում:

(հազար ՀՀ դրամ)

8. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)
Վարկային ռիսկը զսպող գրավ և այլ գործիքներ (շարունակություն)

Բանկը նաև ստանում է երաշխիքներ մայր կազմակերպություններից դուստր կազմակերպություններին տրամադրված վարկերի գծով:

Ղեկավարությունն իրականացնում է գրավի շուկայական արժեքի մոնիտորինգ, պահանջում է ապահովման հավելյալ միջոց՝ հիմնական համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև հետևում է ստացված ապահովման միջոցների շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման կորուստի պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Բանկի սեփականությանն անցած գրավ

2022թ. ընթացքում Բանկը ձեռք է բերել որոշակի ակտիվներ 33,234 հազ. դրամ համախառն հաշվեկշռային արժեքով (2021թ. 904,560 հազ. դրամ) իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով: 2022թ. հունիսի 30-ի դրությամբ բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է անշարժ գույք և դասակարգվում է որպես այլ ակտիվներ: 2022թ.բանկը իրացրել է 791,044 հազ. Դրամ հաշվետկշռային արժեքով ակտիվ (2021թ. 1,417,009 հազ. դրամ): Բանկը մտադիր է վաճառել տվյալ ակտիվները հնարավորինս կարճ ժամկետներում:

Բանկը կնքել է հակադարձ հետգնման պայմանագրեր 13 կազմակերպությունների հետ՝ 7,026,801 հազ. ՀՀ դրամ գումարի չափով (2021թ.՝ 8,200,044 հազ. ՀՀ դրամ): Տվյալ պայմանագրերի առարկա են հանդիսանում պետական արժեթղթերը՝ 7,384,056 հազ. ՀՀ դրամ իրական արժեքով (2021թ.՝ 8,648,803 հազ. ՀՀ դրամ):

Հաճախորդներին տրված վարկերի համակենտրոնացում

2022թ. հունիսի 30-ի դրությամբ տասը խոշորագույն փոխառուներին տրամադրված վարկերի գումարը կազմել է 17,626,353 հազ. ՀՀ դրամ (համախառն վարկային պորտֆելի 7.4%) (2021թ.՝ 19,606,449 հազ. ՀՀ դրամ՝ համախառն վարկային պորտֆելի 9.29%): Այդ վարկերի գծով ստեղծվել է պահուստ 2,844,217 հազ. ՀՀ դրամ գումարի չափով (2021թ.՝ 2,317,105 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ հաճախորդների տեսակների.

	30/06/2022	*31/12/2021*
Մասնավոր ընկերություններ	28,810,029	31,171,101
Ֆիզիկական անձինք	144,898,525	194,157,107
	173,708,554	**225,328,208**

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում.

	30/06/2022	*31/12/2021*
Ֆիզիկական անձինք	144,898,525	194,157,107
Առևտուր	11,380,177	15,223,190
Ծառայությունների ոլորտ	7,265,608	8,234,815
Գյուղատնտեսություն և սննդի արդյունաբերություն	3,860,389	3,483,439
Շինարարություն	6,269,998	3,276,898
Այլ	33,857	952,759
	173,708,554	**225,328,208**

(հազար ՀՀ դրամ)

9. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը, ներառյալ նաև հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը, ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
ՀՀ կառավարության պարտատոմսեր	23,553,180	19,818,135
Կորպորատիվ բաժնետոմսեր	1,193,641	1,541,979
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթեր	**24,746,821**	**21,360,114**
ՀՀ կառավարության պարտատոմսեր	-	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթեր	**-**	**-**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	19,818,135	**19,818,135**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,396,550	**10,396,550**
Մարված կամ վաճառված ակտիվներ	(6,315,360)	**(6,315,360)**
Իրական արժեքի փոփոխություններ	(346,145)	**(346,145)**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**23,553,180**	**23,553,180**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2022թ.հունվարի 1-ի դրությամբ	**136,737**	**136,737**
ԱՎԿ փոփոխություն	35,107	**35,107**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**171,844**	**171,844**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	**16,259,067**	**16,259,067**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,883,531	**11,883,531**
Մարված կամ վաճառված ակտիվներ	(7,441,465)	**(7,441,465)**
Իրական արժեքի փոփոխություններ	(882,998)	**(882,998)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,818,135**	**19,818,135**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**187,382**	**187,382**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	79,824	**79,824**
Մարված կամ վաճառված ակտիվներ	(50,946)	**(50,946)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(79,523)	**(79,523)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**136,737**	**136,737**

(հազար ՀՀ դրամ)

9. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

2022թ. հունիսի 30-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի պորտֆելի 95.18% ը կազմում են ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտատոմսերը (2021թ.՝ 92.78%):

2022թ. հունիսի 30-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտատոմսերը ՀՀ դրամով զեղչատոկոսային պարտատոմսեր են մինչև 2023թ. հունիսը մարման ժամկետով, ՀՀ դրամով արժեկտրոնային պարտատոմսեր՝ 2023թ. ապրիլից մինչև 2050թ. հոկտեմբերը մարման ժամկետներով: Արժեկտրոնների տոկոսադրույքները կազմում են 6.5%-ից մինչև 13.0%:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ հետգնման իրավունքի պայմանագրերի հիմքում գրավադրված ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտատոմսերը ՀՀ դրամով արժեկտրոնային պարտատոմսեր են: 2022թ. հունիսի 30-ի դրությամբ այդպիսի պարտատոմսեր չեն եղել:

10. Հիմնական միջոցներ

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժն՝ ըստ հոդվածների.

	Շենքեր	*Կահույք և պարագաներ*	*Համակարգչային և գրասենյակային տեխնիկա*	*Փոխադրամիջոցներ*	*Վարձակալած սեփականության բարելավում*	*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,201,873**	**3,557,554**	**5,598,424**	**351,081**	**1,909,597**	**5,313,226**	**20,931,755**
Ավելացումներ	82,445	33,228	365,249	-	-	38,071	**518,993**
Օտարում և դուրսգրում	-	(34,379)	(44,149)	(135,460)	(27,567)	(6,773)	**(248,328)**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**4,284,318**	**3,556,403**	**5,919,524**	**215,621**	**1,882,030**	**5,344,524**	**21,202,420**
Կուտակված մաշվածություն							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**(1,038)**	**(2,771,141)**	**(3,474,917)**	**(218,868)**	**(991,518)**	**(1,874,074)**	**(9,331,556)**
Մաշվածություն	(45,610)	(13,691)	(244,045)	(9,767)	(77,266)	(289,653)	**(680,032)**
Օտարում և դուրսգրում	-	34,341	42,502	90,056	27,567	3,991	**198,457**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**(46,648)**	**(2,750,491)**	**(3,676,460)**	**(138,579)**	**(1,041,217)**	**(2,159,736)**	**(9,813,131)**
Հաշվեկշռային արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,200,835**	**786,413**	**2,123,507**	**132,213**	**918,079**	**3,439,152**	**11,600,199**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**4,237,670**	**805,912**	**2,243,064**	**77,042**	**840,813**	**3,184,788**	**11,389,289**

(հազար ՀՀ դրամ)

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժն՝ ըստ հոդվածների.

	Շենքեր	*Կահույք և պարագաներ*	*Համակարգչային և գրասենյակային տեխնիկա*	*Փոխադրամիջոցներ*	*Վարձակալած սեփականության բարելավում*	*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,823,503**	**3,564,021**	**5,582,551**	**351,081**	**1,904,091**	**5,292,857**	**19,518,104**
Ավելացումներ	1,444,243	14,007	247,145	–	5,506	20,369	**1,731,270**
Օտարում և դուրսգրում	(259,500)	(20,474)	(231,272)	–	–	–	**(511,246)**
Վերագնահատման ազդեցությունը	193,627	–	–	–	–	–	**193,627**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,201,873**	**3,557,554**	**5,598,424**	**351,081**	**1,909,597**	**5,313,226**	**20,931,755**
Կուտակված մաշվածություն							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**(128,447)**	**(2,768,370)**	**(3,224,007)**	**(198,938)**	**(832,144)**	**(1,239,947)**	**(8,391,853)**
Մաշվածություն	(57,071)	(23,087)	(481,523)	(19,930)	(159,374)	(634,127)	**(1,375,112)**
Օտարում և դուրսգրում	10,870	20,316	230,613	–	–	–	**261,799**
Վերագնահատման ազդեցությունը	173,610	–	–	–	–	–	**173,610**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(1,038)**	**(2,771,141)**	**(3,474,917)**	**(218,868)**	**(991,518)**	**(1,874,074)**	**(9,331,556)**
Հաշվեկշռային արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,695,056**	**795,651**	**2,358,544**	**152,143**	**1,071,947**	**4,052,910**	**11,126,251**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,200,835**	**786,413**	**2,123,507**	**132,213**	**918,079**	**3,439,152**	**11,600,199**

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները միայն ներառում են շենքեր:

11. Ոչ նյութական ակտիվներ

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է ոչ նյութական ակտիվների շարժն՝ ըստ հոդվածների.

	Ծրագրային ապահովման լիցենզիաներ	*Համակարգչային ծրագրեր*	*Այլ ոչ նյութական ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,812,414**	**2,762,908**	**310,159**	**6,885,481**
Ավելացումներ	62,466	129,100	105,348	**296,914**
Օտարում և դուրսգրում	-	-	(25,980)	**(25,980)**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**3,874,880**	**2,892,008**	**389,527**	**7,156,415**
Կուտակված ամորտիզացիա				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**(2,444,304)**	**(1,616,392)**	**(69,930)**	**(4,130,626)**
Ամորտիզացիա	(226,444)	(59,227)	(3,206)	**(288,877)**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**(2,670,748)**	**(1,675,619)**	**(73,136)**	**(4,419,503)**
Հաշվեկշռային արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,368,110**	**1,146,516**	**240,229**	**2,754,855**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**1,204,132**	**1,216,389**	**316,391**	**2,736,912**

(հազար ՀՀ դրամ)

	Ծրագրային ապահովման լիցենզիաներ	*Համակարգչային ծրագրեր*	*Այլ ոչ նյութական ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,105,968**	**2,489,615**	**257,771**	**5,853,354**
Ավելացումներ	706,446	273,293	52,388	**1,032,127**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,812,414**	**2,762,908**	**310,159**	**6,885,481**
Կուտակված ամորտիզացիա				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**(1,912,754)**	**(1,471,822)**	**(63,334)**	**(3,447,910)**
Ամորտիզացիա	(531,550)	(144,570)	(6,596)	**(682,716)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(2,444,304)**	**(1,616,392)**	**(69,930)**	**(4,130,626)**
Հաշվեկշռային արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,193,214**	**1,017,793**	**194,437**	**2,405,444**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,368,110**	**1,146,516**	**240,229**	**2,754,855**

12. Վարկային կորուստների գծով ծախս, այլ արժեզրկում և պահուստներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը 2022թ. հունիսի 30-ի դրությամբ.

	Ծան.	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	2,422	–	–	**2,422**
Պահանջներ բանկերի նկատմամբ	7	3,804	–	–	**3,804**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	8	183,855	(369,912)	(3,799,812)	**(3,985,869)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	9	(35,107)	–	–	**(35,107)**
Այլ ֆինանսական ակտիվներ	13	15,573	–	–	**15,573**
Ֆինանսական երաշխիքներ և վարկային գծերի չօգտագործված մաս	19	(27,983)	64	273	**(27,646)**
Ընդամենը վարկային կորուստների գծով ծախս		**142,564**	**(369,848)**	**(3,799,539)**	**(4,026,823)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը 2021թ.ավարտվող ֆինանսական տարվա համար.

	Ծան.	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	2,463	–	–	**2,463**
Պահանջներ բանկերի նկատմամբ	7	320	–	–	**320**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	8	(2,068,815)	(4,945,467)	(3,427,238)	**(10,441,520)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	9	50,645	–	–	**50,645**
Այլ ֆինանսական ակտիվներ	13	36,601	–	–	**36,601**

(հազար ՀՀ դրամ)

Ֆինանսական երաշխիքներ և վարկային գծերի չօգտագործված մաս	19	11,874	399	2,689	**14,962**
Ընդամենը վարկային կորուստների գծով ծախս		**(1,966,912)**	**(4,945,068)**	**(3,424,549)**	**(10,336,529)**

Այլ արժեզրկման և պահուստների գծով շարժերը ներկայացված են ստորև.

	Այլ ակտիվներ	*Ընդամենը*
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(1,910,771)**	**(1,910,771)**
Տարվա ծախս	(529,932)	**(529,932)**
Դուրսգրված գումարներ	1,167,589	**1,167,589**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(1,273,114)**	**(1,273,114)**
Տարվա ծախս	(187,051)	**(187,051)**
Դուրսգրված գումարներ	534,147	**534,147**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**(926,018)**	**(926,018)**

Ակտիվների արժեզրկման գծով պահուստները նվազեցվում են համապատասխան ակտիվների հաշվեկշռային արժեքներից:

13. Այլ ակտիվներ և պարտավորություններ

Այլ ակտիվները ներառում են հետևյալ հոդվածները՝

	30/06/2022	*31/12/2021*
Այլ ֆինանսական ակտիվներ		
Կառավարությունից ստացվելիք գումարներ	71	5,443,120
Դեբիտորական պարտքեր	940,709	2,123,052
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	24,130	70,030
Հանած՝ այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով պահուստ	(1,972)	(17,545)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**962,938**	**7,618,657**
Բանկի սեփականությանն անցած գրավ	3,566,027	3,802,495
Շահագործումից դուրս գտնվող անշարժ գույք	291,549	127,376
Կանխավճարներ	4,455,500	1,668,509
Թանկարժեք մետաղներ	588,648	959,250
Նյութական պաշարներ	488,137	230,731
Այլ	324	448
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**9,390,185**	**6,788,809**
Այլ ակտիվներ	**10,353,123**	**14,407,466**

Ստորև ներկայացված է այլ ֆինանսական ակտիվներ գծով ԱՎԿ-ի շարժը 2022թ. հունիսի 30-ի դրությամբ՝

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**17,545**	**17,545**
ԱՎԿ փոփոխություն	(15,573)	**(15,573)**
ԱՎԿ պահուստ 2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**1,972**	**1,972**

(հազար ՀՀ դրամ)

13. Այլ ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Այլ պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները՝

	30/06/2022	*31/12/2021*
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Հաշվեգրված վճարումներ աշխատակիցներին	276,579	316,152
Տարանցիկ հաշիվներ	45,221	768,912
Կրեդիտորական պարտքեր	68,559	537,195
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	10,663	78,452
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**401,022**	**1,700,711**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Շահութահարկից տարբեր այլ հարկային պարտավորություններ	179,148	319,684
Այլ	342,867	13,712
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**522,015**	**333,396**
Այլ պարտավորություններ	**923,037**	**2,034,107**

Բանկն օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները, ինչպես նաև դրանց պայմանական արժեքները: Գրանցված համախառն պայմանական արժեքը ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի, բազային դրույքի կամ ինդեքսի արժեքն է, և հանդիսանում է ածանցյալ գործիքների արժեքի փոփոխությունները գնահատելու հիմք: Պայմանական արժեքները արտացոլում են գործարքների ծավալները տարեվերջին և չեն արտացոլում վարկային ռիսկը:

	2022 թ.			*2021 թ.*		
		Իրական արժեք			*Իրական արժեք*	
	Պայմանական արժեք	*Ակտիվ*	*Պարտավ-որություն*	*Պայմանական արժեք*	*Ակտիվ*	*Պարտավ-որություն*
Արժութային պայմանագրեր						
Սվոփ – օտարերկրյա պայմանագրեր	577,772	9,309	–	5,972,302	5,205	78,452
Տոկոսային պայմանագրեր						
Սվոփ – տեղական պայմանագրեր	2,485,640	14,821	10,663	18,660,635	64,825	–
Ընդամենը ածանցյալ պարտավորություններ		**24,130**	**10,663**		**70,030**	**78,452**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկն ունի դիրքեր հետևյալ տեսակի ածանցյալ գործիքների գծով.

Սվոպ

Սվոպերը երկու կողմերի միջև փոխարժեքներ փոխանակելու վերաբերյալ պայմանագրային համաձայնագրեր են, որոնք համապատասխանում են տոկոսադրույքի և փոխարժեքի փոփոխություններին:

14. Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ

ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները՝

	30/06/2022	*31/12/2021*
Ֆինանսավորման միջազգային ծրագրերի շրջանակներում ստացված վարկեր	198,016	262,195
Ռեպո պայմանագրեր	-	4,402,900
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	**198,016**	**4,665,095**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ ներդրումային արժեթղթերը ստացված հակադարձ ռեպո գործարքներից չափված իրական արժեքով կազմել են զրո դրամ գրավադրված ռեպո գործարքով (2021թ. 4,524,403 հազ. դրամ):

(հազար ՀՀ դրամ)

15. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները՝

	30/06/2022	*31/12/2021*
Ընթացիկ հաշիվներ	4,927,493	2,045,400
Ռեպո պայմանագրեր	–	–
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**4,927,493**	**2,045,400**

«Ընթացիկ հաշիվներ» հոդվածում ներառված է «ՎՏԲ Բանկ» ՀԲԸ-ի 4,752,716 հազ. ՀՀ դրամ մնացորդով (2021թ.՝ 657,020 հազ. ՀՀ դրամ) հաշիվը:

16. Հաճախորդների հաշիվներ

Հաճախորդների հաշիվները ներառում են հետևյալ հոդվածները՝

	30/06/2022	*31/12/2021*
Ժամկետային ավանդներ		
Ֆիզիկական անձինք	105,034,832	120,618,703
Իրավաբանական անձինք	28,734,188	33,053,045
Ընթացիկ հաշիվներ		
Ֆիզիկական անձինք	22,885,955	52,603,481
Իրավաբանական անձինք	33,327,111	82,169,797
Հաճախորդների հաշիվներ	**189,982,086**	**288,445,026**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ տասը խոշորագույն հաճախորդների հաշիվների մնացորդը կազմել է 41,580,212 հազ. ՀՀ դրամ (21.89%) (2021թ.՝ 67,069,888 հազ. ՀՀ դրամ, 23.25%):

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ Բանկը պարտավորվում է հետ վճարել ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդներն ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում: Այն դեպքում, երբ ժամկետային ավանդների գծով դրամական միջոցները հետ են վերադարձվում ավանդատուին մինչև ժամկետի ավարտը համաձայն ավանդատուի պահանջի, ավանդի տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքներին համապատասխան, եթե պայմանագրով այլ տոկոսագումարներ նախատեսված չեն:

Հաճախորդների հաշիվները ներառում են հաճախորդների հետևյալ տեսակների հաշիվները.

	30/06/2022	*31/12/2021*
Պետական և բյուջետային կազմակերպություններ	2,606,596	4,309,628
Մասնավոր ընկերություններ	59,454,703	110,913,214
Ֆիզիկական անձինք	127,920,787	173,222,184
Հաճախորդների հաշիվներ	**189,982,086**	**288,445,026**

Ստորև ներկայացված է հաճախորդների հաշիվների վերլուծությունն՝ ըստ ոլորտների.

	30/06/2022	*31/12/2021*
Ֆիզիկական անձինք	127,920,787	173,222,184
Ֆինանսական կազմակերպություններ	18,166,077	42,908,988
Ծառայություններ	18,032,444	37,954,824
Առևտուր	3,320,912	6,978,754
Հեռահաղորդակցություն	1,257,313	6,238,524
Շինարարություն	5,115,198	6,085,533

(հազար ՀՀ դրամ)

Տրանսպորտ	6,572,652	5,847,340
Պետական և բյուջետային կազմակերպություններ	2,606,596	4,309,628
Արդյունաբերական արտադրություն	2,226,870	3,045,751
Էներգետիկա	3,882,255	854,139
Գյուղատնտեսություն	2,182	19,751
Այլ	878,800	979,610
Հաճախորդների հաշիվներ	**189,982,086**	288,445,026

17. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները ներառում են հետևյալը հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
Այլ փոխառություններ	8,589,483	8,316,655
Վարձակալության գծով պարտավորություններ	3,185,427	3,724,576
Այլ փոխառու միջոցներ	**11,774,910**	**12,041,231**

Այլ փոխառու միջոցների կազմում ընդգրկված են Ազգային Հիփոթեքային Ընկերությունից 2,331,156 հազ. ՀՀ դրամ գումարի չափով (2021թ.՝ 2,413,683 հազ. ՀՀ դրամ) և Բնակարան երիտասարդներին ՈՒՎԿ-ից 6,258,327 հազ. ՀՀ դրամ գումարի չափով (2021թ.՝ 5,902,972 հազ. ՀՀ դրամ) միջոցներ:

18. Սեփական կապիտալ

Հայտարարված սովորական բաժնետոմսերի ընդհանուր քանակը կազմում է 5,905,155 հատ (2021թ.՝ 5,905,155 հատ), որոնց ընդհանուր անվանական արժեքը կազմում է 63,775,674 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 63,775,674 հազ. ՀՀ դրամ) (մեկ բաժնետոմսի անվանական արժեքն է 10,800 ՀՀ դրամ): Բոլոր հայտարարված բաժնետոմսերը թողարկվել և ամբողջովին վճարվել են:

Բանկի կանոնադրական կապիտալը ձևավորվել է բաժնետիրոջ դրամական ներդրումներից, ընդ որում, բաժնետերն ունի շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով բաշխելու իրավունք:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունը:

19. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

(հազար ՀՀ դրամ)

19. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

Իրավական միջավայր

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանդիսանում է դատական հայցերի և պահանջների առարկա: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) էական բացասական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Հարկային միջավայր

ՀՀ հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունները հանդիսանում են տարընթերցումների և հաճախակի իրականացվող բարեփոխումների առարկա: Բանկի գործունեության ընթացքում կիրառված այդ օրենսդրությունների գծով ղեկավարության մեկնաբանությունները կարող են վիճարկվել համապատասխան մարմինների կողմից: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատումների գծով, որի արդյունքում հնարավոր է, որ գործարքների և գործունեության՝ նախկինում հարկային մարմինների կողմից չվիճարկված հարկային հաշվառման նկատմամբ մեկնաբանությունը փոխվի: Արդյունքում, էական լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ կարող են հաշվեգրվել: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները: Որոշակի դեպքերում ստուգումները կարող են իրականացվել ավելի վաղ ժամանակահատվածի համար:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է իրականացնում համապատասխան օրենսդրության մեկնաբանումը, և Բանկի հարկային, արժութային և մաքսային հարցերի շուրջ մոտեցումը ճիշտ է:

Հունիսի 30-ի դրությամբ Բանկի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

	30/06/2022	*31/12/2021*
Վարկային բնույթի պարտավորություններ		
Վարկային գծերի չօգտագործված մաս	5,658,496	5,426,333
Ֆինանսական երաշխիքներ	210,719	2,296,505
Ոչ ֆինանսական երաշխիքներ	759,806	1,165,120
	6,629,021	**8,887,958**
Հանած՝ պահուստները	(143,011)	(115,365)
Պայմանագրային և պայմանական պարտավորություններ	**6,486,010**	**8,772,593**

2022թ. հունիսի 30-ի դրությամբ ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

	Վարկային գծերի չօգտագործված մաս	**Ֆինանսական երաշխիքներ**	***Ընդամենը***
ԱՎԿ պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**101,821**	**13,544**	**115,365**
ԱՎԿ փոփոխություն	36,531	(8,885)	**27,646**
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**138,352**	**4,659**	**143,011**

(հազար ՀՀ դրամ)

20. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

	01/04/2022-30/06/2022	01/01/2022-30/06/2022	01/04/2021-30/06/2021	01/01/2021-30/06/2021
Հաճախորդներին տրված վարկեր	7,112,292	15,885,925	8,831,868	17,297,976
Պահանջներ բանկերի նկատմամբ	63,877	151,327	17,338	33,352
Ներդրումային արժեթղթեր	496,944	914,933	379,067	747,210
Առևտրային արժեթղթեր	82,601	83,253	6,827	16,050
Ընդամենը տոկոսային եկամուտ	**7,755,714**	**17,035,438**	**9,235,100**	**18,094,588**
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	(163,997)	(404,030)	(327,521)	(422,417)
Հաճախորդների հաշիվներ և այլ փոխառու միջոցներ	(3,111,968)	(5,906,145)	(2,995,017)	(5,937,391)
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(130,533)	(263,234)	(135,738)	(275,240)
Վարձակալության գծով պարտավորություններ	(71,592)	(147,368)	(86,028)	(175,025)
Ընդամենը տոկոսային ծախս	**(3,478,090)**	**(6,720,777)**	**(3,544,304)**	**(6,810,073)**
Զուտ տոկոսային եկամուտ	**4,277,624**	**10,314,661**	**5,690,796**	**11,284,515**

21. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է հետևյալ հոդվածները.

	01/04/2022-30/06/2022	01/01/2022-30/06/2022	01/04/2021-30/06/2021	01/01/2021-30/06/2021
Վճարահաշվարկային գործառնություններ	429,532	823,919	427,408	776,769
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացված միջնորդավճարներ	121,207	454,869	457,432	862,189
Երաշխիքներ	1,815	17,961	955	19,424
Միջնորդավճարների գծով եկամուտ	**552,554**	**1,296,749**	**885,795**	**1,658,382**
Վճարահաշվարկային գործառնություններ	(23,054)	(183,756)	(46,711)	(84,034)
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացված միջնորդավճարներ	(3,487)	(165,059)	(358,303)	(656,348)
Այլ	(21,879)	(59,847)	(67,850)	(136,736)
Միջնորդավճարների գծով ծախսեր	**(48,420)**	**(408,662)**	**(472,864)**	**(877,118)**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտներ	**504,134**	**888,087**	**412,931**	**781,264**

22. Արտարժութային գործարքներից զուտ օգուտ

	01/04/2022-30/06/2022	01/01/2022-30/06/2022	01/04/2021-30/06/2021	01/01/2021-30/06/2021
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ օգուտ	3,031,284	4,323,767	642,549	1,080,466
Աճանցյալ ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ / (վնաս)	(159,784)	(474,013)	(238,687)	(544,753)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ օգուտ / (վնաս)	288,770	130,036	(73,123)	(16,344)
Արտարժութային գործարքներից զուտ օգուտ / (վնաս)	**3,160,270**	**3,979,790**	**330,739**	**519,369**

(հազար ՀՀ դրամ)

23. Այլ եկամուտ

	01/04/2022-30/06/2022	01/01/2022-30/06/2022	01/04/2021-30/06/2021	01/01/2021-30/06/2021
Բռնագանձված գույքի վաճառքից եկամուտ	101,828	109,722	166,125	209,272
Ծառայությունների խթանման հետ կապված գործընկերներից ստացված եկամուտ	17,010	35,662	10,219	38,562
Դատավարության ծախսերի փոխհատուցումից եկամուտ	43,252	68,780	146,896	133,929
Ապահովագրական փոխհատուցումից եկամուտ	-	-	73,627	73,627
Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումից եկամուտ	-	-	25,377	27,537
Շահաբաժիններ	-	-	-	-
Թանկարժեք մետաղների հետ կապված գործարքներից եկամուտ	14,238	14,238	-	-
Այլ	(64,407)	(62,999)	(33,837)	85,339
Ընդամենը այլ եկամուտներ	**111,921**	**165,403**	**388,407**	**568,266**

24. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով ծախսերը և այլ գործառնական ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

	01/04/2022-30/06/2022	01/01/2022-30/06/2022	01/04/2021-30/06/2021	01/01/2021-30/06/2021
Աշխատավարձ և պարգևատրումներ	(1,894,040)	(3,955,836)	(1,831,605)	(3,579,961)
Անձնակազմի գծով ծախսեր	**(1,894,040)**	**(3,955,836)**	**(1,831,605)**	**(3,579,961)**
Հիմնական միջոցների մաշվածություն	(341,451)	(680,032)	(343,555)	(679,957)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(139,016)	(288,877)	(192,438)	(379,429)
Ամորտիզացիայի և մաշվածության գծով ծախսեր	**(480,467)**	**(968,909)**	**(535,993)**	**(1,059,386)**
Հիմնական միջոցների նորոգում և տեխնիկական սպասարկում	(139,486)	(301,956)	(114,934)	(250,125)
Գործառնական հարկեր	(117,980)	(219,500)	(119,113)	(237,132)
Ծրագրային ապահովման գծով ծախսեր	(30,540)	(54,991)	(33,335)	(63,818)
Բնակչությունից ներգրավված ավանդների ապահովագրման համակարգում մասնակցություն	(66,656)	(148,620)	(84,843)	(160,627)
Կապ	(58,413)	(142,221)	(75,363)	(148,584)
Դրամական միջոցների հավաքագրման ծախսեր	(80,147)	(80,147)	-	-
Անվտանգություն	(38,351)	(77,135)	(38,475)	(76,486)
Իրավաբանական և խորհրդատվական ծախսեր	(21,709)	(43,639)	(38,073)	(64,336)
Ներկայացուցչական ծախսեր	(40,808)	(90,447)	(42,350)	(69,061)
Մարքեթինգ և գովազդ	(39,814)	(79,614)	(40,898)	(54,812)
Գրասենյակային ծախսեր	(22,505)	(34,478)	(20,235)	(29,830)
Վարձակալության գծով ծախսեր	(23,338)	(48,175)	(20,799)	(41,076)
Տրանսպորտային ծախսեր	(21,486)	(33,017)	(14,721)	(28,961)
Ապահովագրություն	(16,020)	(32,499)	(15,994)	(28,215)
Բարեգործություն	(415)	(514)	(15,741)	(33,772)
Վճարային համակարգերի գծով ծախսեր	-	(2,000)	(2,000)	(2,400)
Դատական ծախսեր	-	-	(194,211)	(194,211)
COVID-19 թեստ	(1,285)	(3,948)	(100,410)	(148,859)

(հազար ՀՀ դրամ)

Պլաստիկ քարտերի ծախսեր	(162,324)	(219,770)	(12,697)	(66,650)
Ֆինանսական ակտիվների օտարումից վնաս	(1,266,537)	(3,532,517)	-	-
Այլ	(1,156,762)	(1,316,718)	(256,566)	(510,694)
Այլ գործառնական ծախսեր	**(3,304,576)**	**(6,461,906)**	**(1,240,758)**	**(2,209,649)**

25. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Ռիսկերի կառավարումը բնորոշ է հանդիսանում Բանկի գործունեությանը և կառավարվում է մշտական հայտնաբերման, չափման և մոնիթորինգի գործընթացների միջոցով, որոնք ենթակա են ռիսկերի սահմանաչափերին և մշտական վերահսկողության: Ռիսկերի կառավարման գործընթացը ունի որոշիչ նշանակություն Բանկի եկամտաբերության հաստատուն մակարդակի պահպանման հարցում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների շրջանակում ի հայտ եկող ռիսկերի համար: Բանկը ենթակա է վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործունեության հետ կապված ռիսկերի: Բանկը ենթակա է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի վերահսկման անկախ գործընթացը չի առնչվում գործունեության վարման հետ կապված ռիսկերի հետ, ինչպիսիք են, օրինակ՝ շրջակա միջավայրի, տեխնոլոգիաների կամ ոլորտային փոփոխությունները: Նման ռիսկերը Բանկի կողմից վերահսկվում են ռազմավարական պլանավորման գործընթացի ընթացքում:

Ռիսկերի կառավարման համակարգ

Ռիսկերի կառավարման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Բանկի Տնօրինությունը, սակայն առկա են առանձին մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

Բանկի խորհուրդ

Բանկի խորհուրդը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր վերահսկման համար, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է Բանկում ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն հետևում է սահմանաչափերի կատարմանը, ռիսկերի կառավարման ընթացակարգերի ներդրմանը, ընդունում է շուկայական և իրացվելիության ռիսկերին վերաբերող որոշումներ, ինչպես նաև վերահսկում է այդ որոշումների կատարումը:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն պատասխանատու է վարկային ռիսկերի կառավարման համար:

Բանկային ռիսկերի կառավարման դեպարտամենտ

Բանկային ռիսկերի կառավարման դեպարտամենտը պատասխանատու է ռիսկերի կառավարման հետ կապված մեթոդաբանության, քաղաքականության և ընթացակարգերի ներդրման համար, իրականացնում է բանկային ռիսկերի վերլուծություն և գնահատում:

Վարկային ռիսկերի կոմիտե

Վարկային ռիսկերի կոմիտեն պատասխանատու է մանրածախ բանկային արտադրանքների, ինչպես նաև մանր

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Ներածություն (շարունակություն)

բիզնեսի համար արտադրանքների գծով ռիսկերի կառավարման շրջանակներում ռազմավարության և նորմատիվների մշակման համար:

Ֆինանսական դեպարտամենտ

Ֆինանսական դեպարտամենտը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար, ինչպես նաև կառավարում է իրացվելիության ռիսկը:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի վարչության կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի վարչությունը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են ԿԲ կողմից սահմանված նորմատիվային ցուցանիշների հաշվարկների միջոցով: Ռիսկերի մոնիթորինգը և վերահսկողությունը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տնօրինությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որում պարունակվում է վարկային ռիսկի ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ ոլորտների, հաճախորդների, մարման ժամկետների, արժույթի և վարկերի տեսակների: Տվյալ հաշվետվությունում նաև ներկայացվում են իրացվելիության և վարկային ցուցանիշները, ինչպես նաև տոկոսադրույքի փոփոխության, արտարժույթի և գործառնական ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ղեկավարությունը օրական կտրվածքով ստանում է Բանկի իրացվելիության ռիսկի վերաբերյալ տեղեկատվություն:

Բանկը մշակել է ռիսկերի կառավարման ընթացակարգ՝ հիմնական բանկային ռիսկերը բնորոշելու, գնահատելու և վերահսկելու համար համակարգային և բազմակողմանի մոտեցում կառուցելու նպատակով:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Բանկը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Բանկը իրականացնում է վարկային ռիսկի

վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Բանկը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Գործընկերների սահմանաչափերը հաստատված են վարկային ռիսկերի դասակարգման համակարգի միջոցով, որը յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանում է ռիսկի վարկանիշ: Ռիսկերի վարկանիշները ենթակա են պարբերաբար վերանայման: Վարկերի որակի ստուգման գործընթացը Բանկին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Վարկային ռիսկ (շարունակություն)

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է

ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային բնույթ ունեցող պարտավորությունների հետ կապված ռիսկեր

Բանկը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների ստացման հնարավորություն, որոնց գծով Բանկի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները նման վճարումները հատուցում են Բանկին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Նշված պայմանագրերի համաձայն՝ Բանկը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 8-ում:

Արժեզրկման գնահատում

Բանկն ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտեցմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

Դեֆոլտի հավանականությունը (PD)	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակի հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Վարկային ռիսկ (շարունակություն)

վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում ՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Բանկը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1:	Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2:	Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Բանկը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3:	Ակտիվը համարվում է արժեզրկված: Բանկը ձևակերպում է ԱԿԱՎԿ պահուստ:
POCI	Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի և վերականգնման սահմանումը

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 90 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Բանկը բանկերին տրված վարկերը համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը գործառնական օրվա ավարտի դրությամբ չի կատարել առանձին համաձայնագրերով սահմանված վճարումները:

Որպես որակական գնահատման մաս, թե արդյոք հաճախորդը անվճարունակ է, Բանկը հաշվի է առնում նաև մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարման քիչ հավանական լինելու մասին: Նման իրավիճակներում, Բանկը վերլուծում է, թե արդյոք իրադարձությունը հանգեցնում է դեֆոլտի և հետևաբար ԱՎԿ հաշվարկման համար ակտիվը անհրաժեշտ է դասվի որպես 3-րդ մակարդակ, թե՞ համապատասխանում է 2-րդ մակարդակին: Տվյալ դեպքերը ներառում են՝

- Վարկառուի ներքին վարկանիշը, որը ցույց է տալիս վարկառուի դեֆոլտի կամ դեֆոլտին մոտ լինելու իրավիճակը,
- Վարկառուի մահը,
- Վարկառուի կողմից անհապաղ ֆինանսավորման պահանջը,
- Գրավի արժեքի զգալի նվազումը, երբ վարկի վճարումը ակնկալվում է գրավի վաճառքից,
- Վարկառուի ապրանքաշրջանառության զգալի նվազումը կամ խոշոր հաճախորդի կորուստը,

(հազար ՀՀ դրամ)

- Կովենանտների խախտումը, որոնց գծով Բանկը չի հրաժարվում դրանց կատարման պահանջի իրավունքից,
- Վարկառուն (կամ վարկառուի խմբի կազմից որևէ կազմակերպություն) սնանկության հայտ է ներկայացրել կամ հայտարարվել է սնանկ,
- Վարկառուի գնանշված պարտատոմսերի կամ բաժնետոմսերի առքուվաճառքը կասեցվել է առաջնային շուկայում՝ Ֆինանսական դժվարությունների մասին լուրերի կամ փաստերի պատճառով:

Բանկի քաղաքականությունն է ֆինանսական գործիքները համարել «վերականգնված» և հետևաբար վերադասակարգել 3-րդ մակարդակից, երբ նվազագույնը վեց հաջորդական ամիսների ընթացքում դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը չի պատահել: «Վերականգնման» դեպքում՝ ակտիվը 2-րդ թե 1-ին մակարդակի դասակարգելու որոշումը կախված է վերականգնման պահին վերանայված վարկային դասից, և գնահատումից, թե արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչման համեմատ:

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Բանկը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Կորպորատիվ և փոքր բիզնեսի վարկավորում

Կորպորատիվ վարկավորման դեպքում վարկառուները գնահատվում են Բանկի ռիսկերի բաժնի կողմից: Վարկային ռիսկի գնահատումը հաշվի է առնում տարբեր պատմական, ընթացիկ տեղեկատվություն և կանխատեսումներ, ինչպիսիք են.

- պատմական տեղեկատվություն հաճախորդի ուշացումների մասին,
- հաճախորդների մասին հանրային տեղեկատվություն տեղեկատվության արտաքին աղբյուրներից: Նման տեղեկատվությունը ներառում է վարկանիշային գործակալությունների կողմից տրված արտաքին վարկանիշերը, անկախ վերլուծաբանների հաշվետվությունները, պարտատոմսերի շուկայում առկա գները կամ մամուլի հաղորդագրությունները և հոդվածները,
- մակրոտնտեսական կամ աշխարհաքաղաքական տեղեկատվություն, ինչպիսիք են ՀՆԱ-ի աճի տեմպերը կոնկրետ ոլորտի և աշխարհագրական շրջաններում, որոնցում գործունեություն է ծավալում հաճախորդը,
- այլ հիմնավորված և հաստատվող տեղեկատվություն հաճախորդի կառավարման որակի և հնարավորությունների վերաբերյալ, որը տեղին է կազմակերպության գործունեության արդյունքների գնահատման համար:

Փոքր բիզնեսի վարկերը գնահատվում են Բանկի կողմից, օգտագործելով մանրածախ ապրանքատեսակների մոդելները:

Սպառողական վարկավորում և հիփոթեքային վարկավորում

Սպառողական վարկավորումը ներառում է ֆիզիկական անձանց տրամադրված գրավով չապահովված վարկեր, վարկային քարտեր և օվերդրաֆտներ: Այս ապրանքատեսակների, ինչպես նաև հիփոթեքային վարկերի և փոքր բիզնեսի վարկերի գնահատումը հիմնված է ժամկետանց օրերի քանակի ցուցանիշի վրա:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Բանկը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Վարկային ռիսկ (շարունակություն)

տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Բանկը առաջարկում է իր կորպորատիվ և մանրածախ հաճախորդներին տարբեր օվերդրաֆտներ և վարկային քարտեր, որոնք Բանկն իրավունք ունի ետ կանչել և/կամ նվազեցնել սահմանաչափը՝ ծանուցելով ընդամենը մեկ օր առաջ: Ծանուցման ներկայացման համար Բանկը չի սահմանափակում վարկային կորուստների ռիսկի ենթարկվածությունը պայմանագրային ժամկետով և փոխարենը հաշվարկում է ԱՎԿ այն ժամանակահատվածի համար, որը արտացոլում է Բանկի հաճախորդների վարքագծի վերաբերյալ ակնկալիքները, դեֆոլտի հավանականությունը և Բանկի կողմից վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ հետագա փոփոխությունները, որոնք կարող են նախատեսել վարկային գծերի նվազեցում կամ փակում:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

LGD- ն հաշվարկվում է կոլեկտիվ հիմունքով՝ հիմք ընդունելով դեֆոլտի ամսաթվից հետո վարկի վերականգնման վիճակագրական տեղեկատվությունները:

LGD չափը գնահատվում է 1-ին, 2-րդ և 3-րդ Փուլերի և POCI բոլոր ակտիվների դասերի համար: Նման LGD չափերիի համար ելակետային տվյալները գնահատվում են և, հնարավորության դեպքում, ճշգրտվում են փորձարկման միջոցով պատմական տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով վերջին շրջանում վերականգնումները: Անհրաժեշտության դեպքում այդպիսի տվյալները որոշվում են յուրաքանչյուր տնտեսական սցենարի համար:

Վարկային ռիսկի զգալի աճ

Բանկը մշտապես ստուգում է բոլոր ակտիվները, որոնց նկատմամբ հաշվարկվում է ԱՎԿ: Բանկը վերլուծում է, արդյոք տվյալ գործիքի կամ գործիքների պորտֆելի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ որոշելու համար, թե ինչ չափով է հարկավոր ստեղծել արժեզրկման գծով պահուստը գործիքի կամ գործիքների պորտֆելի համար (12 ամսվա ԱՎԿ-ի կամ ամբողջական ժամկետի ԱՎԿ-ի արժեքով): Բանկը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Բանկը նաև կիրառում է լրացուցիչ որակական մեթոդներ՝ որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ. օրինակ, հաճախորդի/վարկի տեղափոխումը խնդրահարույց վարկերի ցանկ կամ վարկի վերաձևակերպում վարկային իրադարձությունների հետ կապված: Որոշ դեպքերում Բանկը կարող է նաև վերանայել վերոհիշյալ «Դեֆոլտի սահմանումը» բաժնում նկարագրված իրադարձությունները, որպես վարկային ռիսկի զգալի աճի չափանիշ, այլ ոչ թե որպես դեֆոլտ:

Միևնույն ակտիվների խմբի համար ԱՎԿ-ի գնահատման դեպքում Բանկը կիրառում է նույն սկզբունքները՝ գնահատելու համար, թե արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո:

Ֆինանսական ակտիվների համախմբում, որոնք գնահատվում են խմբային հիմունքներով

Ելնելով ստորև նշված գործոններից, Բանկը հաշվարկում է ԱՎԿ անհատական կամ խմբային հիմունքներով:

Ակտիվների դասերը, որոնց համար Բանկը հաշվարկում է ԱՎԿ անհատական հիմունքով, ներառում են հետևյալը.

- Բոլոր Փուլ 3-ում գտնվող ակտիվները, անկախ ֆինանսական ակտիվների դասից,
- Փուլ 2- ի և Փուլ 3-ի կորպորատիվ վարկավորման պորտֆելը,
- Խոշոր և եզակի գործիքները փոքր բիզնեսի վարկավորման պորտֆելում,
- Գանձապետական և միջբանկային հարաբերությունները (օրինակ, պահանջները բանկերի նկատմամբ, դրամական միջոցների համարժեքները և ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը)
- Ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգվել են որպես POCI սկզբնական վարկի դադարեցման և պարտքի վերակազմավորման արդյունքում նոր վարկի ճանաչման ժամանակ,

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Վարկային ռիսկ (շարունակություն)

Ակտիվների դասերը, որոնց համար Բանկը հաշվարկում է ԱՎԿ խմբային հիմունքով, ներառում են հետևյալը.

- 1-ին և 2-րդ փուլերում հիփոթեքային և սպառողական վարկերը, ինչպես նաև 1-ին փուլի առևտրային վարկավորման պորտֆելը,
- ձեռք բերված արժեզրկված ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են խմբային հիմունքներով:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Բանկը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ աճի տեմպը,
- Գործազրկության մակարդակը,
- Կենտրոնական բանկի բազային տոկոսադրույքները,
- Փոխարժեքները:

ԱՎԿ-ի հաշվարկման համար օգտագործվող ելակետային տվյալները և մոդելները միշտ չէ, որ արտացոլում են շուկայի բոլոր բնութագրերը ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպեսզի դա արտացոլվի, երբեմն կատարվում են որակական ճշգրտումներ կամ ուղղումներ ժամանակավոր ճշգրտումների տեսքով, եթե այդ տարբերությունները էական են:

Կանխատեսվող տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (արտաքին վարկանիշային գործակալություններ, պետական մարմիններ, օրինակ՝ կենտրոնական բանկեր և միջազգային ֆինանսական հաստատություններ): Բանկի վարկային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն:

Հիմնական գործոնները	*ԱՎԿ սցենարը*	*Որոշված հավանակա-նությունը, %*	*2022 թ., %*	*2023թ., %*
ՀՆԱ աճի %				
	Լավատեսական	5%	108.9	108.5
	Բազիսային	90%	104.3	103.8
	Վատատեսական	5%	99.9	99.4
ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	5%	451.5	464.5
	Բազիսային	90%	504.2	505.5
	Վատատեսական	5%	543.3	545.7
Ներմուծման տեմպը				
	Լավատեսական	5%	591.1	633.4
	Բազիսային	90%	459.4	498.8
	Վատատեսական	5%	335.7	374.5
Արտահանման տեմպը				
	Լավատեսական	5%	405.9	451.1
	Բազիսային	90%	321.9	353.0
	Վատատեսական	5%	248.6	272.9
Ոսկու գին, դոլար / տրլ ունցիա				
	Լավատեսական	5%	1,567.2	1,589.8
	Բազիսային	90%	1,750.0	1,730.0
	Վատատեսական	5%	1,885.8	1,867.6

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)
Վարկային ռիսկ (շարունակություն)

Իր քաղաքականության համաձայն, Բանկը պարտավոր է իր վարկային պորտֆելի շրջանակներում վերագրել ճիշտ և հետևողական վարկանիշեր: Դա հնարավորություն է ընձեռում կենտրոնացված կերպով ղեկավարել առկա ռիսկերը, ինչպես նաև թույլ է տալիս համեմատել վարկային ռիսկերի չափը՝ ըստ գործունեության, աշխարհագրական կամ այլ ոլորտների: Վարկանիշների տրման համակարգը հիմնվում է մի շարք ֆինանսավերլուծական մեթոդների, ինչպես նաև մշակված շուկայական տվյալների վրա, որոնք ներկայացնում են գործընկերների ռիսկի գնահատման համար հիմնական ելակետային տեղեկատվությունը: Ռիսկի բոլոր ներքին դասերը սահմանված են Բանկի կիրառվող վարկանշային քաղաքականության համաձայն: Կիրառվող վարկանիշները պարբերաբար գնահատվում և վերանայվում են:

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 8-ում:

Ֆինանսական երաշխիքները, ակրեդիտիվները և վարկային գծերի չօգտագործված մասերը նույնպես ստուգվում են արժեզրկվածության տեսանկյունից, իսկ ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստը հաշվարկվում է այնպես, ինչպես վարկերի դեպքում:

Ստորև ներկայացված է Բանկի դրամական ակտիվների և պարտավորությունների կենտրոնացումը՝ աշխարհագրական հայտանիշով.

	30/06/2022 թ.				*31/12/2021 թ.*			
	Հայաստան	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրներ*	*Ընդամենը*	*Հայաստան*	*ՏՀԶԿ*	*ԱՊՀ և այլ երկրներ*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29,325,112	633,778	1,700,370	**31,659,260**	57,269,567	10,245,140	9,400,652	**76,915,359**
Առևտրային արժեթղթեր	–	–	–	**–**	240,067	–	–	**240,067**
Հետգնման պայմանագրով գրավադրված առևտրային արժեթղթեր	–	–	–	**–**	–	–	–	**–**
Պահանջներ բանկերի նկատմամբ	13,581,440	850,202	–	**14,431,642**	21,183,288	1,288,889	–	**22,472,177**
Հաճախորդներին տրված վարկեր	163,534,660	9,010	64,644	**163,608,314**	210,985,069	584,440	54,655	**211,624,164**
Ներդրումային արժեթղթեր	23,553,180	1,193,641	–	**24,746,821**	19,818,135	1,541,979	–	**21,360,114**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	–	–	–	**–**	–	–	–	**–**
Այլ ֆինանսական ակտիվներ	962,938	–	–	**962,938**	7,618,657	–	–	**7,618,657**
	230,957,330	**2,686,631**	**1,765,014**	**235,408,975**	**317,114,783**	**13,660,448**	**9,455,307**	**340,230,538**
Պարտավորություններ								
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	198,016	–	–	**198,016**	4,665,095	–	–	**4,665,095**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	174,495	–	4,752,998	**4,927,493**	20,214	1,211,289	813,897	**2,045,400**
Հաճախորդների հաշիվներ	169,332,604	1,704,752	18,944,730	**189,982,086**	222,834,272	5,960,098	59,650,656	**288,445,026**
Այլ փոխառու միջոցներ	11,774,910	–	–	**11,774,910**	12,041,231	–	–	**12,041,231**
Այլ ֆինանսական պարտավորություններ	401,022	–	–	**401,022**	1,700,711	–	–	**1,700,711**
	181,881,047	**1,704,752**	**23,697,728**	**207,283,527**	**241,261,523**	**7,171,387**	**60,464,553**	**308,897,463**
Ակտիվների և պարտավորությունների գծով զուտ դիրք	**49,076,283**	**981,879**	**(21,932,714)**	**28,125,448**	**75,853,260**	**6,489,061**	**(51,009,246)**	**31,333,075**

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման աղբյուրների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Բանկը գնահատում և կառավարում է իրացվելիությունը՝ հիմնվելով ՀՀ ԿԲ-ի սահմանած զուտ իրացվելի ակտիվների և հաճախորդների պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշների վրա: 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունը կազմել է՝

	Սահմանային արժեք	*30/06/2022 թ. %*	*31/12/2021 թ. %*
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	նվ 15%	30.30%	34.63%
Ն22 - Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	նվ 60%	116.27%	87.37%

Ստորև ներկայացված աղյուսակը արտահայտում է Բանկի պայմանական և պայմանագրային պարտավորությունները՝ ըստ մարման պայմանագրային ժամկետների: Փոխառություն տրամադրելու գծով բոլոր չկատարված պարտավորությունները ներառվում են հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում հաճախորդը կարող է պահանջել դրա կատարումը: Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում երաշխիքի առավելագույն գումարը վերագրվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում կարող է պահանջվել երաշխիքի կատարումը:

	Մինչև 3 ամիս	*Ընդամենը*
30/06/2022 թ.	6,629,021	**6,629,021**
31/12/2021 թ.	8,887,958	**8,887,958**

Բանկն ակնկալում է, որ ոչ բոլոր պայմանական կամ պայմանագրային պարտավորությունների կատարումը կպահանջվի մինչև ժամկետների ավարտը:

Բանկը ներգրավել է նշանակալի միջոցներ հաճախորդներից: Այդպիսի միջոցների էական նվազումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Ղեկավարությունը գտնում է, որ տեսանելի ապագայում Բանկի ֆինանսավորման ծավալները կպահպանվեն կայուն մակարդակի վրա, և այդ միջոցների վերադարձման անհրաժեշտության դեպքում Բանկը կստանա նախօրոք ծանուցում, և կարող է իրացնել իր իրացվելի ակտիվները՝ անհրաժեշտ վճարումներ իրականացնելու նպատակով:

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Այդ մնացորդները աղյուսակում ներառված են մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող գումարներում:

Պահանջները հաճախորդների նկատմամբ ներառում են ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն Բանկը պարտավոր է հետ վճարել նման ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջով, տե՛ս Ծանոթագրություն 16:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում

(հազար ՀՀ դրամ)

25. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է 2022թ. հունիսի 30-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Տնօրինությունը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Բանկը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Բանկը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում՝ այդ թվում ներքին աուդիտը:

26. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթացներ

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, այնպես էլ իրական արժեքի մեկանգամյա չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Նշանակալի ակտիվների արժեքի գնահատման համար, ինչպիսիք են անշարժ գույքը և գրավի առարկա հանդիսացող գույքերը, Բանկը ներգրավում է անկախ գնահատողների: Անկախ գնահատողների ներգրավման մասին որոշումը կայացնում է Բանկի ղեկավարությունը: Անկախ գնահատողի ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը: Արտաքին գնահատողների հետ քննարկումներից հետո Բանկի ղեկավարությունը որոշում է, թե ինչ գնահատման մոդել և ելակետային տվյալներ պետք է օգտագործվեն յուրաքանչյուր դեպքի համար:

(հազար ՀՀ դրամ)

26. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն ենթակա են վերագնահատման կամ կրկնակի վերլուծության: Այս վերլուծության նպատակով ղեկավարությունը ստուգում է այն հիմնական ելակետային տվյալները, որոնք օգտագործվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Բանկի ղեկավարությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ տվյալ փոփոխության հիմնավորվածությունը որոշելու նպատակով: Բանկի ղեկավարությունը և անկախ գնահատողները պարբերաբար Բանկի ներքին աուդիտի կոմիտեին և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպությանն են ներկայացնում գնահատման արդյունքները: Ներկայացվում են նաև այն հիմնական ենթադրությունները, որոնք օգտագործվել են գնահատման նպատակով:

Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը.

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտվող),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, ուղղակի թե անուղղակի կերպով դիտարկելի են,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, շուկայում դիտարկելի չեն:

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Բանկը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2022թ. հունիսի 30-ի դրությամբ	*Ելակետային տվյալներ (1-ին մակարդակ)*	*Ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)*	*Ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Առևտրային արժեթղթեր	–	–	–	**–**
Հետգնման պայմանագրով գրավադրված առևտրային արժեթղթեր	–	–	–	**–**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,174,327	23,553,180	19,314	**24,746,821**
Հետգնման պայմանագրով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	–	–	–	**–**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	24,130	–	**24,130**
Ընդամենը	**1,174,327**	**23,577,310**	**19,314**	**24,770,951**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,659,260	–	–	**31,659,260**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	14,431,642	**14,431,642**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	164,019,971	**164,019,971**
Ընդամենը	**31,659,260**	**–**	**178,451,613**	**210,110,873**
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	10,663	–	**10,663**

(հազար ՀՀ դրամ)

Ընդամենը	**–**	**10,663**	**–**	**10,663**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	–	–	198,016	**198,016**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	–	4,927,493	**4,927,493**
Հաճախորդների հաշիվներ	–	–	189,974,328	**189,974,328**
Այլ փոխառու միջոցներ	–	–	11,555,160	**11,555,160**
Ընդամենը	**–**	**–**	**206,654,997**	**206,654,997**

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ելակետային փվյալներ (1-ին մակարդակ)*	*Ելակետային փվյալներ (2-րդ մակարդակ)*	*Ելակետային փվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Առևտրային արժեթղթեր	–	240,067	–	**240,067**
Հետգնման պայմանագրով գրավադրված առևտրային արժեթղթեր	–	–	–	**–**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,522,665	19,818,135	19,314	**21,360,114**
Հետգնման պայմանագրով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	–	–	–	**–**
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	–	70,030	–	**70,030**
Ընդամենը	**1,522,665**	**20,128,232**	**19,314**	**21,670,211**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	76,915,359	–	–	**76,915,359**
Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	22,472,177	**22,472,177**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	218,542,513	**218,542,513**
Ընդամենը	**76,915,359**	**–**	**241,014,690**	**317,930,049**
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Աճանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	78,452	–	**78,452**
Ընդամենը	**–**	**78,452**	**–**	**78,452**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	–	–	4,665,095	**4,665,095**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	–	2,045,400	**2,045,400**
Հաճախորդների հաշիվներ	–	–	287,979,913	**287,979,913**
Այլ փոխառու միջոցներ	–	–	11,598,664	**11,598,664**
Ընդամենը	**–**	**–**	**306,289,072**	**306,289,072**

Իրական արժեքով արտացոլված ֆինանսական գործիքներ

Ստորև ներկայացված է գնահատման մեթոդներով հաշվարկված իրական արժեքով արտացոլված ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման նկարագրությունը: Այն ներառում է Բանկի կողմից այն ենթադրությունների գնահատումը, որոնք կարող էին օգտագործվել շուկայի մասնակիցների կողմից գործիքների արժեքի որոշման ժամանակ:

Առևտրային արժեթղթեր / Ներդրումային արժեթղթեր

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող առևտրային արժեթղթերը և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, որոնց արժեքը որոշվում է եկամտաբերության կորի միջոցով, գլխավորապես իրենց մեջ ներառում են պետական արժեթղթեր:

(հազար ՀՀ դրամ)

26. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ստորև ներկայացված է այն ֆինանսական գործիքների իրական և հաշվեկշռային արժեքների համեմատությունը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն արտացոլվում իրական արժեքով: Սույն աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները:

	Հաշվեկշռային արժեք 30/06/2022թ.	Իրական արժեք 30/06/2022թ.	Չճանաչված եկամուտ/ (ծախս) 30/06/2022թ.	Հաշվեկշռային արժեք 31/12/2021թ.	Իրական արժեք 31/12/2021թ.	Չճանաչված եկամուտ/ (ծախս) 31/12/2021թ.
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,659,260	31,659,260	-	76,915,359	76,915,359	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	14,431,642	14,431,642	-	22,472,177	22,472,177	-
Հաճախորդներին տրված վարկեր	163,608,314	164,019,971	411,657	211,624,164	218,542,513	6,918,349
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	198,016	198,016	-	4,665,095	4,665,095	-
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,927,493	4,927,493	-	2,045,400	2,045,400	-
Հաճախորդների հաշիվներ	189,982,086	189,974,328	7,758	288,445,026	287,979,913	465,113
Այլ փոխառու միջոցներ	11,774,910	11,555,160	219,750	12,041,231	11,598,664	442,567
Ընդամենը չճանաչված՝ իրական արժեքում փոփոխություններ			**639,165**			**7,826,029**

Չափման մեթոդներ և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են սույն ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով չարտացոլված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու նպատակով:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Իրացվելի և մարման կարճ ժամկետ (մինչև երեք ամիս) ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին: Սույն ենթադրությունը նաև կիրառվում է ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնց արժեքի գնահատման մոդելների համար ելակետային տվյալները դիտարկելի են շուկայում, հիմնականում տոկոսային և արժութային սվոփերն են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մոդելները ներառում են ֆորվարդների և սվոփերի գնորոշման մոդելներ՝ բերված արժեքի հաշվարկների օգտագործմամբ: Այս մոդելների մեջ ներառվում են տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և եկամտաբերության կորերը: Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի չեն շուկայում, հիմնականում երկարաժամկետ օպցիոնի պայմանագրերն են: Այս ածանցյալ գործիքները գնահատվում են՝ օգտագործելով բինոմական մոդելներ: Մոդելները ընդգրկում են տարբեր ոչ դիտարկելի ենթադրություններ՝ ներառյալ շուկայական տոկոսադրույքի տատանումները:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Գնանշվող արժեթղթերի իրական արժեքն հիմնվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշման վրա: Չգնանշվող գործիքների, հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ավանդների, բանկերի նկատմամբ պահանջների, ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունների, բանկերի նկատմամբ պարտավորությունների, այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը չափվում է ապագա դրամական հոսքերի զեղչման միջոցով՝ ներկա պահին նմանատիպ պայմաններ, վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող պարտավորությունների դրույքների կիրառմամբ:

(հազար ՀՀ դրամ)

27. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների ցանկը, որոնք այնպես են փոխանցվել, որ բոլոր փոխանցված ֆինանսական ակտիվները կամ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը չեն բավարարում ապաճանաչման չափանիշներին:

	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	*Պարտքային պետական արժեթղթեր 2022 թ.*	*Պարտքային պետական արժեթղթեր 2021 թ.*
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	-	-
Ընդամենը		-	-
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	-	-
Ընդամենը		-	-
Զուտ դիրք		-	-

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Բանկը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Բանկը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Բանկը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նման ձևով, Բանկն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Բանկը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ հետգնման պայմանագրերով գրավադրված չեն եղել (2021թ՝ առկա չեն):

28. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի (ISDA, RISDA և այլն) հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(հազար ՀՀ դրամ)

28. Ֆինանսական գործիքների հաշվանցում (շարունակություն)

2022թ. հունիսի 30-ի դրությամբ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված ոչ դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,026,801	–	7,026,801	(7,026,801)	–	–
Ընդամենը	**7,026,801**	**–**	**7,026,801**	**(7,026,801)**	**–**	**–**
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	-	–	-	-	–	–
Ընդամենը	-	–	-	-	–	–

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված ոչ դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր	8,200,044	–	8,200,044	(8,200,044)	–	–
Ընդամենը	**8,200,044**	**–**	**8,200,044**	**(8,200,044)**	**–**	**–**
Ֆինանսական պարտավորություններ						
Ռեպո պայմանագրեր	–	–	–	–	–	–
Ընդամենը	–	–	–	–	–	–

29. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Բանկի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 25-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

(հազար ՀՀ դրամ)

29. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

	30/06/2022 թ.			31/12/2021 թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Մեկ տարուց ավել	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Մեկ տարուց ավել	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,659,260	–	**31,659,260**	76,915,359	–	**76,915,359**
Առևտրային արժեթղթեր	–	–	**–**	240,067	–	**240,067**
Հետգնման պայմանագրերով գրավադրված առևտրային արժեթղթեր	–	–	**–**	–	–	**–**
Պահանջներ բանկերի նկատմամբ	14,431,642	–	**14,431,642**	22,472,177	–	**22,472,177**
Հաճախորդներին տրված վարկեր	57,207,233	106,401,081	**163,608,314**	72,389,851	139,234,313	**211,624,164**
Ներդրումային արժեթղթեր	8,683,052	16,063,769	**24,746,821**	5,222,453	16,137,661	**21,360,114**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	–	–	**–**	–	–	**–**
Հիմնական միջոցներ	–	11,389,289	**11,389,289**	–	11,600,199	**11,600,199**
Ոչ նյութական ակտիվներ	–	2,736,913	**2,736,913**	–	2,754,855	**2,754,855**
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով	260,311	–	**260,311**	263,922	–	**263,922**
Այլ ակտիվներ	6,495,547	3,857,576	**10,353,123**	9,238,308	5,169,158	**14,407,466**
Ընդամենը	**118,737,045**	**140,448,628**	**259,185,673**	**186,742,137**	**174,896,186**	**361,638,323**
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	26,286	171,730	**198,016**	4,416,215	248,880	**4,665,095**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,927,493	–	**4,927,493**	2,045,400	–	**2,045,400**
Հաճախորդների հաշիվներ	180,435,280	9,546,806	**189,982,086**	273,208,298	15,236,728	**288,445,026**
Այլ փոխառու միջոցներ	807,293	10,967,617	**11,774,910**	3,108,401	8,932,830	**12,041,231**
Պահուստներ	143,011	–	**143,011**	115,365	–	**115,365**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	2,034,321	**2,034,321**	–	1,982,715	**1,982,715**
Այլ պարտավորություններ	923,037	–	**923,037**	2,034,107	–	**2,034,107**
Ընդամենը	**187,262,400**	**22,720,474**	**209,982,874**	**284,927,786**	**26,401,153**	**311,328,939**
Զուտ դիրք	**(68,525,355)**	**117,728,154**	**49,202,799**	**(98,185,649)**	**148,495,033**	**50,309,384**

Բանկը ներգրավել է նշանակալի միջոցներ հաճախորդներից: Այդպիսի միջոցների էական նվազումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Ղեկավարությունը գտնում է, որ տեսանելի ապագայում Բանկի ֆինանսավորման ծավալները կպահպանվեն կայուն մակարդակի վրա, և այդ միջոցների վերադարձման անհրաժեշտության դեպքում Բանկը կստանա նախօրոք ծանուցում, և կարող է իրացնել իր իրացվելի ակտիվները՝ անհրաժեշտ վճարումներ իրականացնելու նպատակով:

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում:

Հայաստանում գործում է նաև Ավանդների երաշխավորման հիմնադրամ, որը ոչ առևտրային կազմակերպություն է և հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի համաձայն: Դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը կազմում է 16 միլիոն ՀՀ դրամ: Արտարժույթով ներգրավված ավանդի երաշխավորման առավելագույն չափը կազմում է 7 միլիոն ՀՀ դրամ: Ավանդների երաշխավորումն իրականացվում է Հիմնադրամի միջոցների հաշվին, որոնք ձևավորվում են Հայաստանի բոլոր առևտրային բանկերի կողմից եռամսյակային կտրվածքով կատարվող վճարումների հաշվին: Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը:

(հազար ՀՀ դրամ)

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի փոխհարաբերությունների բովանդակությունը, այլ ոչ միայն դրանց իրավական ձևը:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չէին իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի գործարքների գներից և պայմաններից:

Մայր կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները իրենցից ներկայացնում են մայր կազմակերպության և

Ռուսաստանի Դաշնության կառավարության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

	30/06/2022թ.			*31/12/2021թ.*		
	Մայր կազմակեր-պություն	*Ընդհանուր վերահսկո-ղության տակ գտնվող ընկերութ-յուններ*	*Առանցքային կառավար-չական անձնակազմ*	*Մայր կազմակեր-պություն*	*Ընդհանուր վերահսկո-ղության տակ գտնվող ընկերութ-յուններ*	*Առանցքային կառավար-չական անձնակազմ*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**688,519**	**714,599**	**–**	**1,058,675**	**2,971,064**	**–**
Վարկեր հունվարի 1-ի դրությամբ	–	3,211,327	379,196	–	–	425,889
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	–	930,000	1,226	–	3,211,327	30,689
Տարվա ընթացքում վարկերի մարումներ	–	(3,211,327)	(74,101)	–	–	(77,382)
Չմարված վարկեր ժամանակաշրջանի վերջում	**–**	**930,000**	**306,321**	**–**	**3,211,327**	**379,196**
Հանած՝արժեզրկման պահուստ ժամանակաշրջանի վերջում	–	–	(2,150)	–	(74)	(2,428)
Չմարված զուտ վարկեր ժամանակաշրջանի վերջում	**–**	**930,000**	**304,171**	**–**	**3,211,253**	**376,768**
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**–**	**3,819,690**	**332,341**	**–**	**13,448,051**	**330,429**
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	–	1,672,595	285,137	–	9,902,839	278,664
Տարվա ընթացքում մարված ավանդներ	–	(38,809)	(359,338)	–	(19,531,200)	(276,752)
Ավանդներ ժամանակաշրջանի վերջում	**–**	**5,453,476**	**258,140**	**–**	**3,819,690**	**332,341**
Հաշվարկային և ընթացիկ հաշիվներ ժամանակաշրջանի վերջում	**4,752,716**	**2,556,930**	**20,615**	**657,020**	**4,692,839**	**96,550**
Պայմանագրային պարտավորություններ և տրված երաշխիքներ	–	–	1,255	–	–	11,442

(հազար ՀՀ դրամ)

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Ստորև ներկայացված է կապակցված կողմերի հետ գործառնություններից եկամուտներն ու ծախսերը.

	2022 թ.			*2021 թ.*		
	Մայր կազմակեր-պություն	*Ընդհանուր վերահսկո-ղության տակ գտնվող ընկերութ-յուններ*	*Առանցքային կառավար-չական անձնակազմ*	*Մայր կազմակեր-պություն*	*Ընդհանուր վերահսկո-ղության տակ գտնվող ընկերութ-յուններ*	*Առանցքային կառավար-չական անձնակազմ*
Տոկոսային եկամուտներ վարկերի գծով	78,484	34,464	12,573	25,278	9,833	43,319
Վարկերի արժեզրկում	–	–	24	–	(74)	509
Տոկոսային ծախսեր հաճախորդների միջոցների և բանկերի միջոցների գծով	–	(80,223)	(5,771)	–	(1,057,046)	(4,842)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտներ/(ծախսեր)	–	–	273	–	–	775

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	30/06/2022	*30/06/2021*
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ աշխատակիցներին	724,344	695,799
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցում	**724,344**	**695,799**

31. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	Այլ փոխառու միջոցներ	*Ընդամենը*
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,709,121**	**7,709,121**
Թողարկումից մուտքեր	2,137,643	**2,137,643**
Մարումներ	(1,571,670)	**(1,571,670)**
Այլ	41,561	**41,561**
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,316,655**	**8,316,655**
Թողարկումից մուտքեր	3,555,688	**3,555,688**
Մարումներ	(3,288,091)	**(3,288,091)**
Այլ	5,231	**5,231**
Հաշվեկշռային արժեք 2022թ. հունիսի 30-ի դրությամբ	**8,589,483**	**8,589,483**

«Այլ» հոդվածը ներառում է այլ փոխառու միջոցների և ստորադաս փոխառությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսների ազդեցությունը: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

32. Կապիտալի համարժեքություն

Բանկն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Բանկի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով 1988թ. Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները: Անցած տարվա ընթացքում Բանկն ամբողջությամբ համապատասխանել է վերահսկողի կողմից սահմանած կապիտալի պահանջներին:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Բանկն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

(հազար ՀՀ դրամ)

32. Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Բանկը սահմանում է որպես կապիտալ այն հոդվածները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սահմանվում են որպես վարկային կազմակերպությունների կապիտալի բաղադրիչներ: ՀՀ ԿԲ-ի ՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելի համաձայնության դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) չպետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նվազագույն մակարդակը կազմել է 12%: 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի գործակիցը համապատասխանում է պարտադիր պահանջներին:

Կապիտալի համարժեքության նորմատիվ՝ սահմանված 1988թ. Բազելյան համաձայնագրով

2022թ. հունիսի 30-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է 1988թ. Բազելյան համաձայնագրի դրույթների համաձայն՝ հաշվի առնելով շուկայական ռիսկը ընդգրկելու գծով հետագա փոփոխությունները, կազմել է՝

	30/06/2022թ.	*31/12/2021թ.*
1- ին դասի կապիտալ	32,582,822	39,649,112
2 -րդ դասի կապիտալ	2,269,048	2,524,419
Ընդհանուր կապիտալ	**34,851,870**	**42,173,531**
Ռիսկերով կշռված ակտիվներ	**217,330,429**	**263,665,746**
1-ին դասի կապիտալի համարժեքություն	14.99%	15.04%
Ընդամենը կապիտալի համարժեքություն	16.04%	16.00%